

Մ. Մանուկյան

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ
ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովետահայ գրականությունն իր զարգացման տարրեր ժամանակաշրջաններում անընդհատ հարստացել է ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի բարձր գաղափարն ու ազնիվ զգացումն արտացոլող բազմաթիվ ու բազմաժանր ստեղծագործություններով։ Ընչ վերաբերում է հետպատերազմյան ժամանակաշրջանի գրականությանը, ապա նրա մասին ավելի քան տեղին են հնչում հանճարեղ Դորիսը այն հիացական խոսքերը, թե ոչ մի տեղ ու ոչ մի ժամանակ գրականությունն ընդհանրապես չի արտացոլել այնքան բազմազգ, բազմալեզու, բազմացեղ մարդկանց կյանքն ու կենցաղը, աշխատանքն ու պայքարը, բարեկամությունն ու համերաշխությունը, ինչպես սովետական գրականությունը, որով այն ոչ միայն հիմնովին ու արմատապես տարբերվում է բուրժուական անկումային ու նացիոնալիզմի թուլնով վարակված գրականությունից, այլ և մի գլխով բարձր է կանգնած անցյալ դեմոկրատական գրականությունից։

* * *

Հայրենական Մեծ պատերազմից հետո մեր գրականության մեջ երևան եկան պատերազմի իրադարձությունները պատկերող մի շարք ստեղծագործություններ՝ վեպեր, վիպակներ, դրամաներ, պոեմներ, պատմվածքներ, րանաստեղծություններ։ Մասնավորապես նշանակալից են ծավալուն կտավի երկերը, որոնց մեջ հեղինակները փորձում են իմաստավորել և ընդհանրացնել պատերազմի հարուստ փորձը։ Այդ բոլոր ստեղծագործությունների մեջ էլ, գեղարվեստական տարրեր ուժով, իր արտացոլումն է գտել ժողովուրդների բարեկամությունը։ Մեր գրողները սովետական ժողովրդի հաղթանակը պատկերում են սրպես Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության՝ ազգերի ու ռասաների իրավահավասարության ու եղբայրության փայլուն հաղթանակը՝ ընդդեմ ռասիզմի ֆաշիստական իդեոլոգիայի։ Նրանք գեղարվեստական պատկերներով հաստատում են այն ճշմարտությունը, որ հողս ցնդեցին հիտլերյան զավթիչների հիմար հույսերն այն մասին, թե բարդությունների, դժվարությունների դեպքում երկպառակություն ու ընդհարումներ կլինեն ՍՍՌԽ ժողովուրդների միջև։ Պատերազմը ոչ միայն չթուլացրեց, այլ, ընդհակառակը, է՛լ ավելի ամրապնդեց մեր երկրի բազմազգ ժողովուրդների եղբայրությունը, այն դարձրեց ավելի քան հզոր ու անխորտակելի։ Սովետական Միության ժողովուրդները ձեռք-ձեռքի տված պաշտպան կանգնեցին սիրելի Հայրենիքին, դաժան քննության բովում, համատեղ թափած արյամբ է՛լ ավելի կոփեցին իրենց անխախտ ու անսասան

1 Մ. Իսելի, Դրականության մասին (Հրական հրապ. հոդվածներ, 1949)։

դաշինքը։ Սովետական Բանակը, որի մարտական սխրագործություններն են պատկերում մեր զրոգները, մի անգամ ևս ցույց տվեց, որ, իրոք, ինքը ժողովուրդների միջև խաղաղություն և բարեկամություն պաշտպանող բանակ է։

Հայրենական Մեծ պատերազմն արտացոլող երկերի պաթոսը սովետական կենարար հայրենասիրությունն է, որի ուժի աղբյուրը մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների եղբայրական համագործակցությունն է, նրանց հաստատական ձգտումը՝ հաշտ ու համերաշխ ապրել աշխարհի բոլոր ժողովուրդների հետ, նրանց սերտ համախմբվածությունը միասնական ու անխորտակելի եղբայրական բնտանիքի մեջ։

Հենց այդ հայրենասիրությունն է առանձնապես զեղարվեստական հաջող մարմնավորում ստացել Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպում։ Որն, իրավամբ, համարվում է պատերազմի թեմայով գրված լավագույն վեպը սովետահայ հետպատերազմյան գրականության մեջ։ Հր. Քոչարը գործագրել է պատերազմի ժամանակ ձեռք բերած իր հարուստ փորձը, վերարտադրել տեսած, զգացած, ապրած կյանքը, իրականության ճշմարտությունը։ Պատահական չէ, որ վեպում հանդիպում ենք մի քանի այնպիսի կերպարների, որոնք ծանոթ են մեզ հեղինակի նախորդ ակնարկներից ու պատմվածքներից (օր. Պ. Իվանիդին՝ «Մեր քույրերը» ակնարկից)։

Արտացոլելով կյանքի ճշմարտությունը, Հր. Քոչարը Սովետական Միությունը պատկերում է որպես մի մեծ տուն, մի միասնական բնտանիք, որտեղ իրավահավասար եղբայրներ են բոլոր ազգերն ու ժողովուրդները։ Վերջիններս ունեն իրենց ազգային առանձնահատկությունները, լեզուն, կուլտուրան, տրագիկիաները, սովորություններ, սակայն նրանց միացնում է սովետական կենարար հայրենասիրությունը, որի մեջ ներգաղնակաբեր զուգակցված են ժողովուրդների ազգային տրագիկիաները և Սովետական Միության բոլոր աշխատավորների կենսական շահերը։ Այդ հայրենասիրությունը էն դաստիարակված Քոչարի վեպի գրական կերպարները՝ Սովետական Բանակի բազմազգ մարտիկները, որոնց եղբայրական համերաշխությունը հանդիսանում է նրանց անթափանց սխրագործությունների անսպառ աղբյուրը։ Դեռևս նախքան ռազմաճակատ գնալը իրենց գրեթե լուրջ որպես հարազատ, մտերիմ, անկեղծ բնկերներ, Քոչարի կերտած կերպարները ռազմի բովում, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելու ճանապարհին, նահանջի օրերին, հաղթական հարձակման ժամանակ, զրոհի պահին և դադարի ժամին, միշտ ու ամենուր սրբություն պես պահում ու պահպանում են մարտական եղբայրությունը։ Նրանց համար հարազատ հայրենիք է Սովետական Միության տերիտորիայի յուրաքանչյուր մասը։ Նովոսիբիրսկից եկած մարդու համար ոչ պակաս ծանր է տեսնել ուկրաինական ժողովրդի կրած դժվարությունները. «Ես Նովոսիբիրսկից եմ, — ասում է մի ավագ քաղաքի, — բայց մի՛ կարծեք, թե ավելի թեթև է ծանրությունը սրտիս վրա։ Մենք սովետական մարդիկ ենք, մի տան զավակներ։ Հաստատելով այդ միտքը, հայ ժողովրդի ներկայացուցիչ Տ. Արշակյանն ասում է. «Իսկ ընդհանուր զգացմունք է բոլորիս համար։ Այդ ընդհանուր զգացմունքով են համակված վեպի բոլոր գրական կերպարները՝ սովետական բազմազգ ժողովուրդների ներկայացուցիչները՝ ռուս Վլադիմիր Դեմենտևը, ուկրաինացի Միկոլա Բուրգենկոն, ուզբեկ Ալդիրեկ Մուսրաթյովը, վրացի Բլակի Միկաբերիձեն, ադրբեջանցի Էյուր Համիդովը, հայ Արսեն Տոնոյանը։

և մյուսները: Եւ տան զավակները՝ վեպի հիմնական արժանիքներից մեկն այն է, որ հեղինակը կարողացել է ոչ միայն ներկայացնել սովետական մարդկանց եղբայրական ընտանիքը՝ որպէս մի միասնական, անխորտակելի ուժ, այլև կերտել բազմազգ ու բազմալեզու հերոսների մի ամբողջ շարք կերպարներ, որոնք և մարմնավորում են սովետական ժողովուրդների եղբայրությունը: Կանգ առնենք դրանցից մի քանիսի վրա:

Դնդի հրամանատար, ոռւս ականավոր ազգի արժանավոր զավակ Վլ. Դեմենսեւը օժտված է մի շարք բարձր հատկանիշներով: Իրեն ծնող մեծ ժողովրդի նման նա ունի պայծառ միտք, տոկունություն, համբերություն: Իր ժողովրդի պէս նա հոգատար է դեպի մեր երկրի մյուս ժողովուրդները, անկեղծորեն սիրում է Հայաստանի գեղեցիկ բնությունը, հարազատ ու անդամ որդու նման պաշտպանում է ուկրաինական հողը՝ Վովչան չզանազանելով իր ծննդավայր Սարատովից: Դեմենսեւը խորապէս անհատականացված կերպար է, կյանքի մասին ունի իր օրիգինալ պատկերացումը: Նա տեսնում է գեղեցիկ ու տգեղ երևույթներ, ակտիվորեն միջամտում է որ հաղթանակի լավը, գեղեցիկը: Նա ամբողջ էությամբ վրդովվում է վատ, տգեղ երևույթների համար, բայց որովհետև խոհամիտ է, հավասարակշռված, հանգիստ ու համբերատար, այդ պատճառով ստանում է Վլադիմիր Լենինգով՝ անունը: Վ. Դեմենսեւը սովետական ինտերնացիոնալ բանակի հրամանատար է և հայրականորեն բարի, խանդավառ հայացքով է նայում իր բազմազգ զինվորներին, ճանաչում է նրանց, ցավում կորստի դեպքում, հպարտանում նրանց սխրանքներով: Դեմենսեւի կերպարը բուն սեր է առաջ բերում դեպի նման զավակ ծնող ոռւս մեծ ժողովուրդը:

Վեպի լավագույն կերպարներից է ուկրաինացի Միկոլա Բուրգենկոն, որի երակներում հոսում է ուկրաինական ականավոր զորավար, ոռւս մեծ ժողովրդի բարեկամ Բոգդան Խմելնիցկու և ժողովուրդների եղբայրության հանճարեղ երգիչ Տարաս Շևչենկոյի արյունը: Նա իր մեծ սրտում կրում է իր ժողովրդի և ողջ երկրի վիշտը, բայց չի ընկճվում, չի նվնդվում, երբեք չի կորցնում հաղթանակի պայծառ հավատը, այդ հավատն է ներշնչում և իր ընկերներին: «Կյանքը ամեն բանից ուժեղ է և ո՛չ մի մահ նրան չի հաղթի», — այս է նրա համոզմունքը և այդ համոզմամբ էլ նա հերոսաբար մղվում է հանուն կյանքի հաղթանակի: Ընկերները նրա համար մարտական եղբայրներ են: Ինչո՞ւ բանը վարպետությամբ ցույց է տրված հետևյալ հուզիչ էպիզոդում: Բուրգենկոն ծանր վիրավորվում է: Ընկերները հերթով նրան տանում են պատգարակի վրա: Յուրաքանչյուրի համար նա գտնում է մի ջերմ, սրտառուչ խոսք և առաջին հերթին նրանց անվանում եղբայր: «Գրեթե բոլոր լեզուներով էլ նա գիտեր իր համար ամենասիրելի այդ բառը՝ վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն», — ասում է հեղինակը:

Ուզրեկ ռազմիկ Լիդիբեկ Մուսրայիլովը ամբողջ հոգով կապված է Ֆերգանա հովտին, իր Խաջիջային, բայց իր ծննդավայրը երբեք չի պատկերացնում ՍՍՌՄ ժողովուրդների մեծ ընտանիքից դուրս և այդ գիտակցությամբ էլ կոչվում և արյուն է թափում Ուկրաինայի դաշտերում:

Իրակլի Միկաբերիձեն վեպի սկզբնական մասերում իսկ բնութագրվում է որպէս ժողովուրդների եղբայրության ոգով դաստիարակված մարտիկ: Իրա դեղարվեստական ցուցադրումն է նրա հանգիստին իր ծնողներին Եվլախ կայարանում: Իրակլիի ծնողները, խորապէս սիրելով իրենց զավակ-

ներին, միաժամանակ գործովանքով են վերաբերվում նրանց բնկերներին նկատմամբ, հորդորում և պատվիրում են աչքի լույսի պես պահել եղբայրությունը։ Եվ Իրակլին ռազմաճակատում լիովին արդարացնում է իր ծնողների հույսերը, անդամաճան կերպով կոչում է սիրելի Ուկրաինայի համար, անխնա պատժում ուկրաինական ժողովրդի դավաճուն Մազինին, անխարդախ սիրով կապվում է ուկրաինուհի Եուրա Իվչուկի հետ։ Իրակլի Միկարերիձեն լավ է կատարում իր գործը որպես պարտիական կազմակերպության քարտուղար, մարտիկներին դաստիարակում է ազնիվ քարեկամության ոգով։

Ազրբեջանցի էյուր Համիդովի կերպարի միջոցով Հր. Քոչարը ցույց է տալիս, թե որքան հարազատ է ամեն մի հայրենասերի համար եղբայրական ժողովուրդների կուլտուրան, արվեստը, երաժշտությունը։ Էյուրի երգած ազրբեջանական ժողովրդի հուզիչ ու հոգեպարար երգերը հավասարապես հուզում են նրա ռազմագգ բնկերներին։

Արսեն Տոնոյանը՝ հայ ժողովրդի զավակը, ռազմի բոցերի մեջ երեք չի մոռանում եղբայրական ռեսպեկտիվաների՝ միմյանց հետ ունեցած փոխադարձ օգնության մասին, հաստատ լճոռում է պատերազմից հետո մրցության մեջ մտնել (նա կոլտնտեսական բրիգադի է) ոչ միայն Ուզբեկստանի (Ֆերգանայի) բամբակագործների հետ, որն արդեն որոշված էր մինչև պատերազմը, այլև՝ ուկրաինական Վոլչա բնակավայրի հետ։ Իսկական կոլտնտեսական է Արսեն Տոնոյանը, խորապես զգում է կոլեկտիվի, միության, եղբայրության ուժը և ջանք չի խնայում կոլեկտիվի համար։

Հր. Քոչարի վեպում շատ են դրական կերպարները և ռազմագգ։ Դրանցից աչքի են բնկնում նաև Մ. Լուգանսկոյը, Լև Յասնոպոլյանսկին, կապիտան Յուրչենկոն, Շալվա Միկարերիձեն, Տիգրան Արշակյանը, Կ. Իվսուկը, Իգոր Սլավինը, Կարո Ֆաչիկյանը, Բժիշկ Լյաշկոն, Պավել Իվանիդին և ուրիշները։

Մեր նպատակից դուրս է տալ բնդհանրապես վեպի գնահատականը և խոսել բոլոր կերպարների մասին։ Թվում է, ասածից էլ արդեն պարզ է, որ հեղինակը կարողացել է ժողովուրդների եղբայրությունը դրսևորել ոչ թե ճառերի ու հայտարարութունների օգնությամբ, այլ ռեալիստորեն ցույց տալ, որ այդ ազնիվ զգացումը որպես միա ու արյուն իրենց մեջ կրում են կենդանի մարդիկ, կոնկրետ գործողությունների մեջ երևան եկող լիարյուն կերպարներ։ Մենք էլ չենք խոսում այն մասին, որ Հր. Քոչարի վեպում կան մի շարք ուշագրավ, ուղղակի անմոռանալի գեղարվեստական դետալներ, որոնք ժողովուրդների եղբայրության ցայտուն արտահայտություններ են։ Որպես օրինակ հիշենք Տ. Արշակյանի և ուկրաինացի ծերունի պատմասեր Օլես Բարենկոյի զրույցները, Մ. Մելիքյանի խորը համակրանքը դեպի Տարաս Շևչենկոյի սքանչելի խոսքերը՝ զբված պոետի արձանի պատմանդանի վրա, ոուս ազնիվ կին Դաշա Լյուբիմովայի նամակագրությունը ուզրեկ Մուսրայիլովի հետ, կովի թեժ պահին մեկը մյուսի կյանքը փրկելու դեպքերը և այլն։

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն փաստը, որ Հ. Քոչարը միաժամանակ անխնա մերկացնում է ՍՍՌԽ ժողովուրդների եղբայրական բնտանիքում եղած խորթ ու այլանդակ էլեմենտներին՝ անկախ նրանց ազ-

գային պատկանելիությունից (Սարխոշով, մայր և աղջիկ Գյուշկոները, Մազին և ուրիշներ)։

Ինչպես արդեն ասացինք, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրության գաղափարով են թափանցված պատերազմի թեմաներով գրված մյուս ստեղծագործությունները՝ Հ. Սիրասի, Քր. Թափալցյանի, Ս. Սանգազյանի, Ան. Սահինյանի, Անժ. Ստեփանյանի, Պ. Ջոթյանի, Գ. Պետրոսյանի վեպերը։

Մեր քննադատությունը ժամանակին նշել է Հմ. Սիրասի «Արարատ» վեպի թերությունները։ Մենք հուզենայինք ընդգծել միայն այն փաստը, որ վեպի ամենահաջող տեղերը հանդիսանում են ժողովուրդների բարեկամությունը նվիրված հատվածները, մասնավորապես Շեպովալովի գումարտակի մարտական գործողությունները պատկերող էջերը, որտեղ մենք տեսնում ենք ոչ միայն Շեպովալովի և Արարատյանի, այլև ողջ գումարտակի բազմազգ ռազմիկների մարտական բարեկամությունը, անկեղծ մտերմությունը, համերաշխ պայքարը նենգ թշնամու դեմ։ «Արարատ» վեպում ջերմորեն գծագրված բազմազգ հերոսներից սիրով են հիշվում ողուս մեծ ժողովրդի զավակ Բենիսովը, ուկրաինացի խիզախ հրամանատար Օստուժկոն, մարտական եղբայրներ գարձած Արգուն ու Հունանը և ուրիշները։ Հմ. Սիրասի «Հայր և որդի» վիպակում հաջողությամբ արտացոլված է սովետական տարրեր ազդի ռազմիկների եղբայրական օգնությունը մեկը մյուսին, ընկերոջ կյանքը փրկելու համար՝ մահվանն ընդառաջ գնալու պատրաստակամությունը (Սուրեն Նահապետյան, Գոյոսով)։ Նույն բանը ցույց է տալիս նաև Քր. Թափալցյանն իր «Պատերազմ» վեպում, ինչպես և մյուս գրողները։ Թափալցյանի հերոսները՝ Վասյան, Արամը, Արասովը, Սուխաշվիլին ոչ միայն գիտակցում են եղբայրության ուժը և հիացմունքով խոսում այդ մասին, այլև մարտի բովում եղբայրների նման նեցուկ են դառնում իրար, Վոլկովը օգնում է ֆիզիկապես թույլ ընկերներին, Վասիլը փրկում է Արամի կյանքը։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե ինչ եղբայրության մասին է խոսքը, երբ զինվորները փրկում են մեկը մյուսի կյանքը։ Սակայն իրականում դա, իրոք, եղբայրության փոք արտահայտություններն են, պայմանավորված Սովետական Բանակի ինտերնացիոնալ գաստիարակությունը։ Պետք է հիշել, որ աշխարհի ոչ մի բազմազգ բանակում չի եղել ու չկա իսկական իրավահավասարություն, ընդհանրապես, իշխել և իշխում է ազգային խտրականությունը, այսպես կոչված, «այլազգիներին» մղել են ու մղում են դեպի մահ։ Այս առթիվ չի կարելի չհիշատակել երիտասարդ արձակագիր Ստ. Ալաթաթյանի «Անսպասելի» վեպը, որտեղ բացահայտված է անգլիական բանակի էությունը։ Անգլիական բանակը նմանապես բազմազգ է՝ կազմված անգլիացիներից, հնդիկներից, նեգրերից, եգիպտացիներից և այլն և այլն։ Բայց դա ոչ թե նրա ուժը, այլ թուլությունն է, որովհետև այդ «այլազգիներին» արհամարհում են, երկպառակություն անբանում նրանց միջև, գաստիարակում ռասիզմի իդեոլոգիայով, ստիպում են կռվել իրենց իսկ ժողովուրդների դեմ, սարքակացնել, թալանել, ճնշել ազգային-ազատագրական շարժումները։ Ինչպես, առանձին անհատների միջև կարող է լինել և կա համերաշխություն, փոխադարձ օգնություն, սակայն դա չափ հեռու է մասսայական երկվույթ լինելուց, որպիսին տեսնում ենք Սովետական Բանակում։

Սովետական Բանակի զինվորների բարձր հումանիզմը, ինտերնացիո-

նալիզմն է դրսևորում Հմ. Սիրասը իր «Երգը» պատմվածքում, որտեղ սովետական սպան կոնկրետ օրինակով ցույց է տալիս ժողովուրդների բարեկամության սովետական իդեոլոգիայի վեհությունը: Հարազատ զավակի պես փայփայելով ու զրադեցնելով ֆաշիստական բարբարոսներից սարսափահար եղած փոքրիկ Գերտրուդին, Ս. Նահապետյանը ապացուցում է սովետական զինվորի ազնիվ նպատակները նաև մեր երկրի սահմաններից դուրս: Այս տեսակետից միանգամայն հաջող գեղարվեստական պատկեր կա երիտասարդ վիպասան Սերո Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ» վեպում: Ամբողջ վեպում պատկերելով գնդի ռազմագզգ զինվորների մարտական սրխաբանները, մի շարք կոնկրետ ու բնորոշ էպիզոդներում վերարտադրելով ժողովրդական դասակարգ մարտական կյանքը (դասակը ստանում է «եղրայրական» անունը շնորհիվ իր խնամքից խոնարհ կազմի), Ս. Խանզադյանը ցույց է տալիս, թե ինչպես հասնելով ՍՍԽՄ պետական սահմանին սաֆոնովյան գնդի մարտիկները միահամուռ սալյուտ են տալիս և երգում ՍՍԽՄ Պետական Հիմնը: Ազատ ռեսպուբլիկանների անխորտակելի միասնության, եղրայրության, իրավահավասարության երգը շրթունքներին սովետական զինվորները ոտք են դնում սահմանից այն կողմ՝ նոր կյանք, լույս ու ազատություն տանելով ճնշված ու հարստահարված ազգերին ու ժողովուրդներին: Երգը բոնկվեց, թռավ, ոգևորեց, վարակեց բոլորին, առաջին վաշտի վրայով տարածվեց մյուս վաշտերն ու փովեց սահմանագլխի վրա: Հազարավոր մարդիկ ոգևորված սկսեցին երգել, երգել երկու հարյուր միլիոն մարդկանց սրտից քամված երգը...

Երգը թևեր առած թռչում էր լեհական դաշտերի ու անտառների վրայով, արձագանք գտնում այնտեղ և երգողներին թվում էր, թե հող ու քար, ծառ ու թուփ նոր կյանք են ստանում իրենց երգից...»:

Բնորոշ է, որ լեհական առաջին խսկ գյուղում սովետական ռազմիկները ճրագ են վառում լեհ գյուղացու խրճիթում, նրան տալիս լույս, որ ժամանակավորապես հանգցրել է ին ֆաշիստական զավթիչները:

Զխոսելով Հայրենական Մեծ պատերազմի թեմայով գրված մյուս ստեղծագործությունների մասին, որպիսիք շատ ունենք նաև փոքրածավալ արձակի, պոեզիայի և դրամատուրգիայի բնագավառում (Շ. Թաթևկյան՝ «Երկնագույն թաշկինակը», Աղավնի՝ «Սակրավոր Սաքո», Դ. Բոբյան՝ «Բարձունքներում» և այլն), նշենք միայն, որ այդ երկերում ցուցադրված է անշահախնդիր եղրայրությունը նաև թիկունքի մարզկանց միջև: Քր. Թափալցյանի «Պատերազմ» վեպում անպայմանորեն հուզիչ է Արմենյանների և Դորրովների բարեկամական փոխհարաբերությունը: Ջգացմունքով են գրված Ան. Ստեփանյանի «Քույրերը» վեպի այն հատվածները, որտեղ հայ կինը՝ Նատոն, չնայած տնտեսական սուղ պայմաններին, ոչ միայն սիրով ընդունում է ուկրաինուհի Արինա Տարասովնային և նրա երեխային (Գրիշատկա), նրա հետ միասին հորդ արցունք թափում նրա կորցրած զավակների համար, այլև Արինայի մահից հետո գործազուրկ մոր պես խնամում է Դրիշատկային, նրան չզանազանելով իր հարազատ երեխայից: Իր բոլոր թերություններով հանդերձ Գ. Պետրոսյանի «Թիկունքում» վեպում ուշագրավ է Երևանի գործարաններից մեկում աշխատող ագրիկուլտի և հայ բանվորների ջերմ բարեկամությունը:

Սովետական Միության ժողովուրդների եղբայրությունը հաղթանակի գրավականն էր—այս է պատերազմի թեմայով գրված երկերի էությունը:

* * *

Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի յուրովի արձագանքն են ականավոր արձակագիրներ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը: Դրանցում հեղինակները բարձրացնում են մեր նախնիների լավագույն տրագիգիաները, անցյալի պայծառ էջերը ի սպաս դնում փառապանծ ներկային, մեր մարդկանց դաստիարակում ջերմ հայրենասիրության ոգով, հակադրվում ազգային նիւնիլիզմի արատավոր կոնցեպցիային:

Դ. Դեմիրճյանը ստեղծագործաբար յուրացնելով կլասիկ պատմավեպի լավագույն կողմերը, աչքի առաջ ունենալով սովետական պատմավեպագրության փորձը (Ա. Տոլստոյ և ուրիշներ) և վառ օրինակ ցույց տալով, որ ստեղծել չի նշանակում նմանվել ինչ-որ բանով, այլ յուրացնել վարպետության պրյուսները (Գորկի) հաջողությամբ դրել է սովետահայ պատմավեպի սկիզբը: Եվ ուրախալին այն է, որ սովետահայ պատմավեպի սկիզբն ազդարարող այդ առաջին խսկ երկում իր դեղարվեստական ցայտուն արտացոլումն է գտել ժողովուրդների բարեկամությունը (խոսքը երկրորդ հրատարակության մասին է):

Դ. Դեմիրճյանը խորագրերին ուսումնասիրել է պատմագրությունը, էթնիկան, ժողովրդական բանահյուսությունը և իր ստեղծագործական հարուստ ֆանտազիայով թափանցել է դարերի խորքը, ճանաչել ու ռեալիստորեն վերարտագրել ժամանակի բնորոշ երեւոյթները, իրականության ճշմարտությունը: Հենց այդպիսի պատմական ճշմարտություն է, որ Անդրեյովկասի երեք բախտակից ժողովուրդները՝ վրացիները, հայերը և ադրբեջանցիները հնուց ի վեր կապված են պատմական բախտի և շահերի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ ու բարեկամությամբ: Վրացական և ադրբեջանական սովետական ականավոր բանաստեղծներ՝ Ի. Դրիշաշվիլին, Ս. Հուլին, Ս. Վուրդունը և ուրիշները բազմիցս նշել են այդ մասին: Ս. Հուլին գրել է. «Եղբայրներ, մեզ նույն կրակն է այրել»¹, Բ. Գրիշաշվիլին հաստատում է, որ մեր ժողովուրդները միասին են անցել իրենց պատմական ուղին, ծաղկել են դրկից ու եղբայրաբար»²:

Իրենց պատմական ուղին միասին անցած մեր ժողովուրդների այդ բարեկամության զգացումը ներթափանցված է «Վարդանանք» վեպի գեղարվեստական ողջ հյուսվածքի մեջ՝ որպես նրա գաղափարական-գեղարվեստական հարուստ բովանդակության օրգանական անկապտելի մասը: Առանց ավելորդ զարդարուն խոսքերի և կեղծ պաթետիկայի՝ Դ. Դեմիրճյանը գեղարվեստական չխամբող գույներով վեր է հանում այդ բարեկամության կենսահաստատ ուժը, այն դիտում որպես ժողովուրդների գոյության կենսական նախապայմանը: Պատահական չէ, որ բարեկամությունը ցայտուն կերպով արտացոլված է վեպի հատկապես այն հատվածներում, որոնց մեջ հեղինակը նկարագրում է ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձություններ, որպիսիք են պարսից Սերուխտ զորավարի դեմ մղվող

¹ «Գրական թերթ», 1951, № 8, 23/11:

² «Գրական թերթ», 1950, № 44, 30/XI:

կոիվր և Ավարայրի պատմական ճակատամարտը, որտեղ հանդես է եկել անդրկովկասյան երեք ժողովուրդների՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների միասնական պայքարը՝ ընդդեմ տարսկական նվաճողների:

Վարդանը- երբեք չի մոռանում այդ եղբայրական բարեկամության մասին, շարունակ ոգևորում է իր կողմնակիցներին, հիշեցնելով. «Մեզ հետ են վրացիները և ադվանները, մենք կհաղթենք միացյալ ուժերով»:

Դ. Դեմիրճյանը չի իդեալականացնում անցյալը: Նա ցույց է տալիս, որ մեր ժողովուրդների իշխող վերնախավերում եղել են նաև ժողովուրդների բարեկամության մոլի հակառակորդներ (փասկյանները, վրաց իշխաններից ոմանք և այլն), որոնք ճգնել են դժտեցնել ժողովուրդներին: Սակայն աշխատավոր մարզիկ միշտ էլ մնացել են բարեկամներ, ձգտել են հաշտ ու համերաշխ կյանքի, միասին կռվել են այդ կյանքի համար: Ցույց տալով, թե ինչպես հայ ժողովրդին՝ նրա օրհասական պահին, Ավարայրի ճակատամարտում, օգնության են հասնում վրացիներն ու ադվանները, Դ. Դեմիրճյանն իր վեպն ավարտում է հետևյալ խոսքերով. «Կովում էին հայ, վրացի, ադվան շինականներ ու զինվորներ, կովում էին բռնակալության դեմ ցասումով ու տոկունությամբ, կովում էին խաղաղության և արդարության երազով»:

Այսպես, անցան օրեր, անցան տարիներ, անցան դարեր...»:

Այս գեղեցիկ ու խորիմաստ եզրավակիչ տողերում դրսևորված է այն իրողությունը, որ չնայած նախասովետական բոլոր իրավակարգերում մեր ժողովուրդների մեջ զանազան ձևերով ու երանգներով վերնախավերի կողմից սերմանվել է ազգային ու կրոնական թշնամանք, երկպառակություն, այնուամենայնիվ, աշխատավորության մեջ գերակշռել է փոխադարձ բարեկամության զգացումը, որը չի սասանվել նրանց միատեղ անցած պատմական երկար ու դարավոր ճանապարհին:

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 32-րդ տարեդարձի առթիվ տված իր զեկուցման մեջ ընկ. Գ. Մ. Մալենկովն ասում է. «Մեր Հայրենիքի պատմության մեջ, նրա անձայրածիր տարածություններում բնակվող ժողովուրդները դեռ երբեք միմյանց հետ այսքան համերաշխ չեն եղել»¹: ՍՍՌՄ ժողովուրդների այդ եղբայրական համերաշխությունն է վառ կերպով դրսևորվել հետպատերազմյան կյանքը պատկերող ստեղծագործություններում՝ պոեզիայում, պրոզայում, դրամատուրգիայում: Պատկերելով սովետական կյանքը, մեր գրողները ցույց են տալիս ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների համատեղ աշխատանքն՝ ու պայքարը կոմունիզմի ու խաղաղության համար, փառաբանում են նրանց մեծ բարեկամությունը՝ մեր սոցիալիստական բազմազգ պետության այդ հիմքերի հիմքը, մերկացնում բուրժուական նացիոնալիզմի բոլոր և ամեն տեսակ արտահայտությունները, մեր մարզկանց դաստիարակում անխախտ եղբայրության ու կոմունիզմի ոգով:

Շատ են այդ ստեղծագործությունները, բայց մենք կանգ կառնենք միայն մի քանիսի վրա, ամենեին չժխտելով մյուսների արժանիքները:

¹ Գ. Մ. Մալենկով, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 32-րդ տարեդարձը, 1949, էջ 4:

Առանձին ուշագրություն է գրավում այն փաստը, որ սովետահայ պոեզիայի ավագագույն վարպետ Ս. Իսահակյանը, չնայած իր խորը ծեծությունը, երիտասարդական ավյուրն ու հանգես դալով ի պաշտպանություն խաղաղության և ժողովուրդների բարեկամության, բանաստեղծական տողերի է վերածում հայ ժողովրդի նամակը Ի. Վ. Ստալինին՝ նրա ծննդյան յոթանասունամյակի առթիվ։ Այդ բանաստեղծության մեջ հեղինակը ընդգծում է, որ իրագործելով լենինյան-ստալինյան տղգային քաղաքականությունը, Գոմոնիստական պարտիան մեր երկրի ժողովուրդներին համախմբել է միասնական եղբայրական ընտանիքի մեջ և նրանց հաստատություն առաջ է տանում կոմունիզմի ուղիով։ Ականավոր բանաստեղծը առանձնապես շեշտում է, որ ողջ մեծ ժողովուրդը՝ մեր Վրացական բարեկամը դարավոր, թե՛ անցյալում, թե՛ մեր օրերում գլխավորում է ՍՍՌԽ ժողովուրդների մեծ ընտանիքը, որը կոչ է ու անսասան, անընկճելի է՝ Վերայրական Սովետների հզորությունը։

Նույն միտքը բանաստեղծական այլ նտարանքներով արտահայտված է հաև Ն. Զարյանի «Պոսք եղբայրության» բանաստեղծության մեջ. և ո՛չ միայն Ն. Զարյանը, այլև սովետական ու սովետահայ բոլոր գրողներն էլ արտահայտել են այդ միտքը, որի էությունը, ուղիղական մեծանուն բանաստեղծ Պ. Տիչինայի գիպուկ ընորոշմամբ հանգիստանում է՝ Վրասնական ընտանիքի ղգացումը։ Ինքը՝ Ն. Զարյանը, խոսելով նույն գաղափարներն արտահայտելու մասին, սովետական վրացական պոեզիայի առթիվ գրել է. «Մենք կառուցում ենք նույն կոմունիստական հասարակարգը, ապրում ենք միևնույն իգեալներով։ Մենք տարրեր լեզուներով, բայց նույն սրտով ենք սիրում մեր սովետական բազմազգ հզոր Հայրենիքը, տարրեր լեզուներով, բայց նույն սրտով ենք սիրում մեր սովետական ընտանիքի ավագ եղբորը՝ ողջ մեծ ժողովրդին...»¹։ Պարզ է, որ ստեղծագործողի խընդիրն է գեղարվեստական ինքնուրույն միջոցներով, ինչպես ասում են սեփական ձայնով, վերարտագրել տվյալ միտքը, գաղափարը, ղգացումը։ Իսկ Ն. Զարյանը ունի իր ձայնը, իր ոճը, իր ինքնուրույնությունը։ Որպես մեր պոեզիայի առաջատար գեմքերից մեկը, նա ամեն անգամ գտնում է նոր ու թարմ արտահայտչական միջոցներ, գեղարվեստական պատկերներ, պաթոսով ու թափով երգում կյանքը, հաև ժողովուրդների եղբայրությունը։ «Պոսք եղբայրության» բանաստեղծության մեջ Ն. Զարյանը ինքնատիպ համեմատություններով խոսում է Անգրիտիկասի երեք ժողովուրդների և ողջ ժողովրդի հինավուրց բարեկամության մասին։ Նա ցույց է տալիս, որ ինչպես Վերաքսն ու Քուռը քույրերի նման՝ հոսում են Գասպից ծովը Վեյ ալնեղ ձուլվում մեծ Վոլգայի հետ, այնպես էլ վրացիները, հայերը, տգրեջանցիները սերտորեն միավորված են ողջ մեծ ժողովրդի գլխավորած եղբայրական ընտանիքում։ Ռոլջ ժողովուրդը տվել է մեզ Վնոր սեր ու եղբայրություն, օգնել կառուցելու Վնոր աշխարհ, նոր տուն։ Պատերազմի կրակներում էլ ավելի է կոփվել եղբայրությունը։

Եվ մեր արյունը հայրենաթաթով,
Ինչպես Վերաքսը, Քուռը կամ Ազրին,

¹ Ն. Զարյան, Սովետական Վրաստանի պոեզիան, «Սովետական գրականություն և արվեստ», 1950, № 10, էջ 150։

Մարտի դաշտերում թափվեց, միացավ
Ռուս ժողովրդի արյան գետերին:

Հայ ժողովուրդը, ինչպես առում է Ջարյանը՝ ռուսըր եղբայրության
իր խոսքն է ասում՝ սովետական եղբայրական ուսպություններին, առանց
որոնց անշահախնդիր օգնության անհնարին կլինեիր հայ ժողովրդի ազգա-
յին վերածնունդն ու առաջընթացը: Այդ եղբայրության արևի տակ է, որ
մեր ժողովուրդը ծաղկել է, զորացել:

Որք էինք, անտուն, մենք հայրեր դարձանք,
Անպաշտպան էինք, դարձանք պաշտպաններ:

Ն. Ջարյանի պոեզիային հատուկ հուժկու պաթոսով է շնչում «Մոսկվա»
հորեկյանական ներդրողը, գրված Մոսկվայի փառապանծ 800-ամյակի
առթիվ: Սոսկով Մոսկվայի պատմական ծառայությունների մասին,
Ի. Վ. Ստալինը ասել է, որ Մոսկվան հանդիսանում է նաև «ժողովուրդների
բարեկամության կազմակերպման և մեր բազմազգ պետության մեջ նրանց
եղբայրական համագործակցության կենտրոնը»¹: Այս ոգով ու շնչով են
գրված մեր պոետներ Ն. Ջարյանի, Գ. Սարյանի, Սարմենի, Ս. Կապու-
տիկյանի, Գ. Էմինի, Հ. Սահյանի և բոլոր մյուսների բանաստեղծություն-
ները Մոսկվայի մասին: Դրանցից ամեն մեկը իր ուժերի չափով և տար-
բեր արտահայտչական միջոցներով ցույց է տալիս, որ, իրոք, Մոսկվայում
է կոփվել ու կոփվում ժողովուրդների բարեկամությունը: Դեռևս սովետա-
կան մեծ բանաստեղծ Վ. Մայակովսկին, Մոսկվան գիտելով որպես Հոկ-
տեմբերյան ռույտույրայի օրրանը, պաթոսով գրել է.

Երբ Հոկտեմբերը
խուժեց փողոցները
արյունով, փոթորկով հրանոթների,
Դիտեմ,
Մոսկվայում էր լուծվում ճակատագիրը
և՛ կիևների,
և՛ Թիֆլիսների:

Ն. Ջարյանի «Մոսկվան» իր գաղափարական-գեղարվեստական արժա-
նիքներով լավագույններից մեկն է սոցիալիզմի մեծ մայրաքաղաքին նը-
վիրված բանաստեղծությունների շարքում: Հեղինակը նախ խոսում է աշ-
խարհի մի շարք մեծ քաղաքների մասին, նշում է Լոնդոնի, Փարիզի,
Բեռլինի, Նյու-Յորքի բազմամարդ ու փառահեղ լինելու փաստը, վերջիշում
նույնիսկ Տիբրոնը և պատմական փաստերով ցույց տալիս, որ Մոսկվան
աշխարհում առաջին մայրաքաղաքն է, ուր ազատ ու իրավահավասար են
դարձել բոլոր մեծ ու փոքր ազգերն ու ժողովուրդները.

Իսկ առաջին մայրաքաղաքն ես
Այս արևի տակ,
Որտեղ շրջում է փոքրաթիվ ազգի որդին
Ոչ թե ձեռքին շղթա
Ու հոգու մեջ ապտակ,
Այլ ինքնարժան, հպարտ
Ու համասար ամեն քո անցորդին:

¹ «Սովետական Հայաստան», 1947, № 210, 7/XI:

Ահա ինչու հայ պոետը փառաբանում է Մոսկվան «ինչպես հայրենի տուն», հոգեկան ծննդավայր և Վլ. Մայակովսկու պես ամբողջ ձայնով ու արժանապատվությամբ իրեն համարում հպարտ ու հզոր, որպես Մոսկվայի «հարազատ քաղաքացին»:

Անկեղծությամբ ու ջերմությամբ են գրված Ն. Ջարյանի «Սովետական Վրաստանին», «Ողջուն Ուզբեկստանին» բանաստեղծությունները, որոնցից ամեն մեկը իր ուրույն ինտոնացիաներն ունի և հանգիստանում է հայ պոետի սրտից բխած եղբայրական խոսքը վրաց և ուզբեկ ժողովուրդներին: Եթե ուրիշները բանաստեղծությունների մի ամբողջ շարք են նվիրում Սովետական Լատվիային, այնուամենայնիվ, չկարողանալով հասնել զեղարվեստական լուրջ ընդհանրացումների, ապա Ն. Ջարյանը միայն «Նամակ ընկեր Ժանիս Ջուլմաչին» բանաստեղծությամբ ընդհանրացման մեծ ուժով վեր է հանում ՍՍՌՄ ժողովուրդների, այդ թվում և լատվիական ու հայ ժողովուրդների համերաշխությունն ու փոխադարձ սերը: Հրապարակախոսական-քաղաքական կրակոտ պաթոսին ներգաշնակորեն զուգակցելով նուրբ էմոցիան, հուզականությունը, Ն. Ջարյանը յիտվին համոզում է, որ սովետական ազնիվ մարդիկ մեր երկրի որ մասումն էլ որ ապրեն, ինչ ազգություն էլ որ պատկանեն, հոգով ու սրտով, նպատակներով ու ձգտումներով մեկ են, հավասարապես սիրում են Հայրենիքը և ատում թշնամիներին, սրունք մերթ թախալմամբ կորցնելով օգային ուղին, մերթ սողոսկելով Արարատի կատարը իրրև գողեր, լրտեսում են մեզ: Ահա թե ինչու լատվիական ապակեգործ նորարար բանվորը և հայ պոետը իրենց ժողովուրդների անույնից հուժկու ձայն են բարձրացնում խաղաղության համար՝ հյուսիսում ու հարավում, արևելքում և արևմուտքում, և այդ այն պատճառով, որ մարդկայնորեն սիրում և ամուսնանում են «Եվ Ռիգայում, և Նյու-Յորքում ննջող մանուկներին»:

Տարբեր ազգություն պատկանող, տարբեր խառնվածքի տեր և տարբեր վայրերում ապրող, բայց հասարակական նույն շահերն ունեցող սովետական մարդկանց մտավոր ու հոգեկան աշխարհի հարազատությունը, նրանց ջերմ ու սրտառուչ եղբայրությունը հուզական մեծ թափով գրեկվորված է մեր անվանի քնարերգու Գեղամ Սարյանի հետպատերազմյան պոեզիայում: Հանգիստանալով ժողովուրդների բարեկամության խանդավառ երգիչ, Գ. Սարյանը պարզ ու համակիչ պատկերներով երգում է Մոսկվան, Կիևը, Ագրեջանը և առհասարակ «հոկտեմբերյան բազմազգ սերունդները» («Հոկտեմբերյան սերունդները»): Եվ, որ էականն է, յուրաքանչյուրի համար նա գտնում է բնորոշ, բնութագրական, յուրահատուկ գույներ, երանգներ, ինտոնացիաներ, այնպես, որ կարգալից բանաստեղծությունը անմիջապես զգում ես, թե խոսքն ում մասին է: Ժողովուրդների բարեկամությունը Գ. Սարյանի պոեզիայում չի կրում գեղարատիվ բնույթ, նա բարձր գաղափարը սերտորեն զուգակցում է խորը հուզականությանը, պահպանում մտքի և հույզի ներգաշնակությունը, որը Վ. Գ. Բելինսկին համարել է բանաստեղծության ուժի, հաջողության և երկարակեցության առաջին նախապայմանը:

«Գաֆուր Դուլյամին» բանաստեղծության մեջ Գ. Սարյանը գրեկորում է ուզբեկ և հայ պոետների հոգեհարազատությունը և սերը Ուկրաինայի նկատմամբ: Եվ այդ կատարում է ոչ թե էպիտեաների, հիացական

քառերի կուտակմամբ, այլ՝ տվյալ պահին ծնունդ առած անմիջական խոհերի ու զգացումների վարպետ դրսևորման միջոցով: Ուզրեկն ու հայր շրջում են կիևում, դիտում կիևի կենտրոնական փողոցը՝ կրեշատիկը: Հենց սկզբից զգում ես, որ նրանք ոչ թե ժամանակավոր այցելուներ կամ սովորական տուրիստներ են, այլ հանդիսանում են նույն եղբայրական բնությանի քիզի զավակները, որին պատկանում է նաև Ուկրաինան: Այդ երևում է ոչ թե պոետի հայտարարություններից, որին նա չի դիմում, այլ նախ՝ նրանից, որ ուզրեկն ու հայր, ամեն մի ուկրաինացի ջերմ հայրենասերի նման, ցավով ու ցասումով են դիտում պատերազմի ծանր հետևանքները կիևում: Այդ երևում է նաև նրանից, որ ուզրեկ բանաստեղծի խոհերի ու զգացումների դրսևորմամբ, հեղինակը շեշտում է, որ կիևի՝ որպես հարազատ օջախի համար կոփել և արյուն են թափել մեր երկրի բազմազգ ժողովուրդների զավակները, այդ թվում և Գուլյամի որդին, որն ընկել է կիևի համար մրդված մարտերում: Հայ բանաստեղծը բաժանում է իր գրչի ընկերոջ հայրական կսկիծը՝ նրա հետ միասին վշտանում է թե՛ նրա զոհված որդու, թե՛ կիևին հասած աղետների համար: Գ. Սարյանը, մյուս կողմից, առանձնապես ընդգծում է, որ իզուր չի անցել թափած արյունը. ավելին. հենց այդ համատեղ թափած արյան բովում է է՛լ ավելի կոփել մեր ժողովուրդների եղբայրությունը, դրա շնորհիվ է, որ ուզրեկն ու հայր ոչ թե սովորական հյուրեր են Ուկրաինայում, այլ գտնվում են հարազատ տանը, հարազատների միջավայրում, կիևցիների պես հպարտությամբ են ընկալում քաղաքի հետագա ծաղկման ու բարգավաճման հեռանկարները:

Շքեղ կկանգնի փողոցն այս կրկին,
Կրարձրանան նոր շենքեր վիթխարի,
Եվ ամեն զոհված հերոսի հոգին
Հպարտ կնայի նորից աշխարհին:

Եվ կիև կգա նորից ինչպես տուն,
Սրտում արևոտ երկրի սալամբ,
Եվ կհանդիպի այստեղ իր որդուն
Ուզրեկ բանաստեղծ Գաֆուր Գուլյամբ:

Եղբայրական Ուկրաինայի մասին շատ են խոսել սովետահայ գրողները թե՛ նախաստերազմյան, թե՛ Հայրենական Մեծ պատերազմի, թե՛ հետպատերազմյան ժամանակաշրջանում: Մասնավորապես հետպատերազմյան տարիներին ինչպես արձակում, այնպես էլ պոեզիայում մենք ունենք բազմաթիվ գործեր, որոնց մեջ հեղինակները պատկերում են ոուս մեծ ժողովրդի միասնական արմատից ելած, նրա արյունակից եղբայր ուկրաինական մեծ ժողովրդի հերոսական կյանքն ու աշխատանքը, ուզգային պանծալի տրագիդիաները, շքեղ ու հարուստ կուլտուրան, նրա առաջնակարգ տեղը և դերը ՍՍԽՄ ժողովուրդների բնաշնչում: Հայրենական Մեծ պատերազմի թեմայով գրված երկերից զատ, որոնց մի քանիսի մասին խոսել ենք արդեն, այդ տեսակետից նշանակալից են սովետահայ գրողների մի շարք ելույթներն ու ակնարկները (Ավ. Իսահակյան, Ն. Զարյան, Գ. Էմին, Գ. Բորյան և ուրիշներ) և բազմաթիվ բանաստեղծութայինները (Ս. Կապուտիկյան, Հ. Շիրազ, Ա. Գրաշի, Ս. Հարությունյան, Պ. Միքայելյան,

Ա. Այվազյան, Մ. Հարությունյան և շատ ուրիշներ)։ Այդ բոլորի մեջ էլ մեր գրողները վերարտադրում են այն պատմական ճշմարտությունը, որ սովետական բոլոր եղբայրական ժողովուրդների նման, մոտ ու հարազատ են իրար ուկրաինական և հայ ժողովուրդները, որոնք օրհասական վտանգից փրկվել և հասել են սոցիալիզմին իրենց բախտը կապելով ուսման ժողովրդի պատմական բախտի հետ։

Եթե ուկրաինական սովետական խոշորագույն բանաստեղծ Պ. Տիչինան սրտահույզ տողերում խոսել է այն մասին, որ Սասունցի Դավթի երանների մեջ հոսող ուժը ատանձնապես մոտ ու հարազատ է ուկրաինական ժողովրդին¹, ապա հայ մեծանուն վարպետ Ավ. Դսաճկյանը զգացմունքով գրել է. «Հայ ժողովուրդը սիրում է Ուկրաինայի ժողովրդին, թյուրք պետության դաժան հալածանքներից նա բարի ապաստան է գտել այնտեղ, մենք սիրում ենք ուկրաինական ժողովրդի արվեստը, նրա ժողովրդական սքանչելի երգերը հարազատ են մեր սրտին, ինչպես և մեծ Շեչենկոն, Սովետական ուկրաինական նոր բանաստեղծները՝ Պ. Տիչինան, Մ. Լիլյսկին, Ա. Կորնեյչուկը, Բաժանը, Պերվոմայսկին Հայաստանի անկեղծ բարեկամներն են, ինչպես մենք նրանց անկեղծ բարեկամներն ենք»։

Այդ անկեղծ բարեկամության զգացումով են տոգորված Հ. Շիրազի «Եղբայրություն», Ս. Կապուտիկյանի «Մենք միասին ենք եղել և ուրիշ», Ս. Հարությունյանի «Հանդիպում», Ար. Այվազյանի «Ուկրաինա», Պ. Միքայելյանի «Երգը», Միք. Հարությունյանի «Ինն պր, Ինն պր», Ա. Սարգսյանի «Ուկրաինա և շատ ուրիշ բանաստեղծություններ»։ Հ. Շիրազը բանաստեղծական պատկերներով արտահայտում է այն միտքը, որ իր սրտին ծանրացած էր ուկրաինական ժողովրդի վիշտը, երբ պատերազմը աղետներ էր պատճառում երկրին, երբ զերի էր ուկրաինական սուրբ հողը։

Երբ գերի էր իր սուրբ հողը՝
Իմ սիրտն էլ էր հառաչում,
Իմ ոսոխն էր իր ոսոխը
Իմ էլ ոխն էր մոնչում։

Իսկ այժմ, երբ բացվում են Ուկրաինայի վարդերը, կյանքը ծաղկում է նոր ուժով, հեղինակը համակված է անհուն ուրախությամբ, իր սիրտն էլ է ծիծաղում, և նա հպարտությամբ փառաբանում է ժողովուրդների եղբայրությունը՝ մեր փրկության, հաջողությունների բանալին, որն անխախտ, անսասան, հավերժորեն կանգուն մի բերդ է։

Ս. Հարությունյանի «Հանդիպում» բանաստեղծության մեջ կոմբատ Բատյուկը հանդես է բերված որպես ուկրաինական մեծ ժողովրդի արժանավոր զավակը, որը թե՛ պատերազմի ժամանակ՝ կրակների բովում, թե՛ աշխատանքային ճակատում քայլում է առաջավորների շարքում։

Պ. Միքայելյանն իր «Երգը» բանաստեղծության սրտահույզ տողերում պարզ ու անզարդ խոսքերով վերարտադրում է այն իրողությունը, որ ուկրաինական ժողովրդի հոգեպարար երգը հուշում ու ապրեցնում է ինչպես մայրական օրորոցայինը, Դիմելով ուկրաինացի ընկերոջը, պոետն ասում է։

¹ «Դրական թերթ», 1939, № 27, 30 X։

² «Դրական թերթ», 1948, № 4, 31 I։

Ավելի քաղցր ինչ կա աշխարհում,
 Քան սրտին ձուլված մայրենի երգը,
 Բայց քո երգն է ինձ օրորել մարտում
 «Сонце низенько, вічор блізенько...»:

Բանաստեղծ Միք. Հարությունյանը երախտագիտությամբ է վերհիշում խիզախ ուկրաինուհուն, որը ռազմի օրերին փրկում էր սովետական բամազո ռազմիկների կյանքը (սեֆեֆ, Դեֆեֆ), փառարանում է ուկրաինական պատանի հայրենասերի սխրանքները (սմարա Պոլեշուկա): Ա. Մարոյանը ինքնուրույն ձևով ցույց է տալիս, որ Երևանից ուղևորվել դեպի Ուկրաինա նշանակում է վերադառնալ հայրենի տուն (սևկրաինայում): Ար. Այվազյանը բանաստեղծական ջերմ տողերում շեշտում է, որ իր եղբայրը զոհվել է Ուկրաինայի դաշտերում և ինքն էլ պատրաստ է հարկ եղած դեպքում կյանքը նվիրաբերել սիրելի Ուկրաինային, քանի որ իր համար հավասար չափով հարադատ են Դոնն ու Արաքսը, Թուամայանն ու Շեչենկոն (սևկրաինային)¹:

Այս բոլորի կողքին իր առանձնահատուկ տեղն ունի Գ. Մարյանի «Ուկրաինային» հուզիչ բանաստեղծությունը, որի յուրաքանչյուր տողի մեջ զգում ես եղբայրական ուկրաինական ժողովրդի վեհությունն ու հմայքը, հայ ժողովրդի նվիրական սերը Ուկրաինային: Գ. Մարյանը, ինչպես ինքն է ասում, «որդիարար է հիշում» ուկրաինական ժողովրդի վեհ տրագիգիաները, Կիևի գեղահրաշ հմայքները, Տ. Շեչենկոյի հուզաթաթալ ու կրակոտ երգերը: Նրա հոգին մի պահ մոայլվում է վերհիշելով ֆաշիստական հոր-դաների բարբարոսությունները, բայց նա պայծառանում է իսկույն, քանի որ, ինչպես դարեր շարունակ, Հայրենական Մեծ պատերազմում ևս ուկրաինական ժողովուրդը հերոսաբար մաքառեց օտարերկրյա ստրկացնողների դեմ և վառ պահելով ոռուս մեծ ժողովրդի անկեղծ բարեկամ Բոգդան Խմելնիցիու բարձր տրագիգիաները, ոռուս ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների հետ թև-թևի տված փայլուն հաղթանակ տարավ: Այդ բոլորից հետո պոետը, հայ ժողովրդի անունից նորանոր հաջողություններ ցանկանալով եղբայրական Ուկրաինային, իրեն հատուկ լիրիկական ջերմությամբ ասում է.

Արդ անսպառ թող լինի մայրությունը քո հողի,
 Սերունդներիդ երջանիկ՝ ուրախությունը առատ,
 Համբուրում եմ իմ հեռվից քո ճակատը հաղթողի,
 Ուկրաինա սիրելի, Ուկրաինա հարազատ:

Հարազատ ինտոնացիաներով լի այս տողերում արտահայտված է մեր ժողովրդի բոլոր ցանկությունը՝ Ուկրաինան տեսնել առավել ծաղկուն ու բարգավաճ, հարուստ ու երջանիկ:

Ինտոնացիաների հարազատությամբ է աչքի ընկնում Գ. Մարյանի

¹ Հոգվածը շարված լինելու պատճառով հնարավորություն չունեցանք խոսելու վերջին մի շարք ջերմ ելույթների (Դեմիրճյան, Արաղի, Զորյան և ուրիշներ) և բանաստեղծությունների մասին (Սարմեն, Հո. Պողոսյան, Ա. Մարգարյան, Արտ. Պողոսյան և ուրիշներ), որոնք նվիրված են ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրության վառ ցուցադրումը հանդիսացող պատմական իրադարձությանը՝ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման սլանձալի 300-ամյակին:

նաև «Ազրբեջան» լիբիկական բանաստեղծությունը, որը մի գեղարվեստական սրտարուխ երգ է՝ նվիրված եղբայրական ադրբեջանական ժողովրդին: Այդ երգը համակում է մեզ իր անմիջականությամբ, բնականությամբ. լիովին հավատում եմ, որ բանաստեղծության լիբիկական հերոսը՝ ինքը հեղինակը՝ մանկութ սիրել է մեր բախտակից ժողովրդի «երգերի անուշ լեզուն», նրա հեքիաթները՝ «կախարդիչ հմայքներով», նրա հոգեպարար, «սրտահույզ ու անվախճան» մեղեդիները, նրա «խմաստուն խոսքն» ասված սիրով: Եվ անհիշատակ ամեն մեկը կարող է հաստատել պոետի այդ զգացումը: Հենց այդ է վկայում նաև Ավ. Խահալյանը դրելով. «Մեր ժողովուրդների խմաստուն խոսքերը, հեքիաթներն ու լեգենդները՝ մեր ընդհանուր հոգեկան սևփականությունն են, մեր կյանքի ուղեկիցները մանկության օրերից մինչև ծերություն» (Երկեր, հատոր V, էջ 196): Նշանակում է Գ. Սարյանի հույզերն ու զգացումները չեն կրում նեղ-անձնական բնույթ, այլ ընդհանրական են, ուստի և համակիչ: Ակնհայտ է, որ հեղինակն իր սեփական հույզերի ու զգացումների դրսևորությամբ հասել է գեղարվեստական ընդհանրացման:

Էպիկական մեծ շնչով գրած իր «Բաժակ եղբայրության» բանաստեղծության մեջ Գ. Սարյանը տպավորիչ պատկերներով ցույց է տալիս, որ սովետական ժողովուրդները ոչ թե միայնակ սարեր են, այլ միացել ու կազմել են «Եղբայրության լեռնաշղթան սովետական աշխարհի» և այդ եղբայրության ուժով հաստատ են ու անսասան, հզոր են ու անպարտ.

Եղբայրության հզոր ուժով, հայտնի լինի ամենքին,

Հպարտ ենք մենք, անպարտ ենք մենք, հաստատ ենք մենք

ու համառ:

Դ. Սարյանի նշած (և ուրիշ) բանաստեղծությունները քաղաքական լիբիկայի ցայտուն օրինակներ են և գալիս են ապացուցելու, որ քաղաքական-հրապարակախոսական բարձր պաթոսը և անկեղծ, անմիջական, այսպես կոչված, ինտիմ հույզը, զգացմունքը ոչ թե բացառում, այլ լրացնում են միմյանց, հանդես գալով սերտորեն ներդաշնակված, միասնաբար, բանաստեղծությանը հաղորդում են ներգործոն մեծ ուժ, դարձնում նպատակասլաց ու ազդու, հասնում ընթերցողի սրտին ու մտքին:

Աճող, շնորհալի բանաստեղծ Հ. Սահյանը նույնպես պարզ, անմիջական, հուզական խոսքի օգնությամբ է արտահայտում նպատակասլաց միտքը, նաև ժողովուրդների եղբայրության գաղափարը: Այդպես է. օրինակ՝ «Թախիա-Տաշում» բանաստեղծությունը, որտեղ ինքնատիպ պատկերների միջոցով Հ. Սահյանը ցույց է տալիս ՍՍՌՄ ժողովուրդների համատեղ աշխատանքի ու փոխօգնության բովում ցեմենտավորվող եղբայրությունը: Հեռավոր Թախիա-Տաշում պոետը ոչ միայն իրեն զգում է ինչպես իր պատանության հարազատ ուստանում, ուր նրա համար «ամեն ժպիտ հասկանալի» է, այլև ցույց է տալիս, թե ինչպես ողուսական երգը շրթին և շինարար մուրճը ձեռքին՝

Ուզրեկը մեր տուֆի վրա

Թուրքմենական նախշ է քաշում

Այս հեռավոր, այս հեռավոր,

Այս հեռավոր Թախիա-Տաշում:

Թարմ է հնչում Հ. Սահյանի բանաստեղծական խոսքը եղբայրական վրաց ժողովրդի մասին (Վրաց ժողովրդին)։ Լինելով բնության ջերմ երգիչներից մեկը սովետահայ սլոեզիայում, Հ. Սահյանը կարողանում է հենց բնության նկարագրությամբ վեր հանել վրաց և հայ ժողովուրդների դարավոր հարևաններ լինելու զաղափարը և ցուցադրել նրանց նյութական ու հոգևոր կյանքի հարազատությունը, որը նոր աստիճանի է բարձրացել սովետական իրավակարգում, երբ, իրոք, սահման չկա վրաց ու հայ ժողովուրդների միջև, երբ սահմանադաշնակա հանգնած Արաքսի ափին

Հսկում է մեր անեզրական
Հայրենիքի սահմանն անքուն,
Որ չլինի ոչ մի անգամ
Ոչ մի սահման մեր արանքում։

Վրաց և հայ ժողովուրդների եղբայրության մասին հետաքրքրական է երիտասարդ սլոեզ Վ. Դավթյանի ԾԾերունի կոլխոզնիկ Քվաչախիայի բաժակաճառը։ Հեղինակն իր հերոսին խոսեցնում է կյանքի լավին ու վատին տեղյակ, փորձառու ծերունու լեզվով, որը համեմատված է ժողովրդական իմաստալից արտահայտություններով ու դարձվածքներով։ Ծերունին, խոսելով մեր ժողովուրդների բարեկամության մասին, գիմում է այսպիսի արտահայտությունների՝ «Իրար օջախից կրակ ենք տարել», «Իրար հետ կիսել և դին, և հաց» և այլն։ Միայն «Իրար օջախից կրակ ենք տարել» արտահայտությունը բավական է հասկանալու համար հայ և վրաց ժողովուրդների ջերմ եղբայրությունը, քանի որ օջախի հանգչելը, ժողովրդի պատկերացմամբ, մեծագույն դժբախտություն է, իսկ վրացիներն ու հայերը ոգնել են միմյանց՝ վառ պահելու կրակը հայրենի օջախում։ Սեփական կենսափորձից ելնելով ծերունին համոզվում է, որ եղբայրությունը մեծ ուժ է, որն առանձնապես խորացել ու հզոր է դարձել ողւս մեծ ժողովրդի գլխավորած սովետական ժողովուրդների ընտանիքում։

Բանաստեղծ Հր. Հովհաննիսյանը լավ է գրասևրում իր լիրիկական հերոսի բուռն հիացմունքն ու հպարտությունն այն բանի համար, որ ծաղկում ու բարգավաճում է եղբայրական Արխազիան, որը սիրելի է ամեն մի ազնիվ հայրենասերի համար (Մարխազիայում)։

ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրության մասին սիրով ու ջերմությամբ են գրում Վ. Աղասյանը, Աթ. Սենալը (Սենալյան), Մ. Դավթյանը, որոնք ապրում ու ստեղծագործում են եղբայրական Ադրբեջանում՝ շրջապատված հոգատարությամբ ու բարեկամությամբ։ Աթ. Սենալը ամենայն իրավունքով հպարտանում է Բաքվով, որպես հարազատ ծննդավայրով, հպարտանում է Շնրա անդյալ ու նոր փառքով, Շառօրյայով ու գալիքով (ՇՀրպարտություն)։ Վ. Աղասյանը ողջունի ու երախտագիտություն, ժանքակտելի եղբայրության սիրով լի սրտառու խոսք է ասում Սովետական Ադրբեջանին՝ նրա պանծալի ԶՕ-ամյակի առթիվ (ՄԱդրբեջան)։ Մագմազդ, բազմալեզու, բազմերանգ ու բազմաբեղուն, կյանքով ու սիրով առլեցուն Բաքվի բանվորության հետպատերազմյան տարիների համերաշխ ու ստեղծարար աշխատանքն է պատկերում արձակագիր Մ. Դավթյանը Մեր քաղաքում՝ վեպում։ Բ դեմս վեպի մի շարք հերոսների (Սավչենկո, Սահամյան, Մուստաֆաև, Լևոն Ստեփանյան, Խանքիշի Մանաֆով և այլն)

մենք տեսնում ենք տարրեր ազգի մարդկանց եղբայրական համագործակցությունը, խանդավառ աշխատանքն ու պայքարը Հայրենիքի հզորացման համար: Նրանք մտերիմ ընկերներ են, բայց չեն ներում միմյանց թերությունները: Քննադատելով իրար, միասին ուրոնում են բացերը վերացնելու ուղիները: Վեպում մի առանձին տեղ է գրավում ավագ վարպետ Մանաֆովի և երիտասարդ նորարար Լևոնի բարեկամությունը:

Հեռավոր ուրալյան մի գյուղի մարդկանց հետպատերազմյան կյանքը պատկերող իր «Յասվա» վիպակում, Մ. Արմենը վերարտադրում է այն ճշմարտությունը, որ օտարություն չկա սովետական մարդկանց միջև, երկրի որ մասում էլ որ նրանք աշխատեն Հայրենիքի համար: Կատարելով սովետական հայրենասերին բնորոշ հումանիստական ակտ, այցելելով ուրալյան Բորիսովկա գյուղը՝ իր զոհված ընկերոջ ընտանիքին, Միքայելն իրեն զգում է հարազատների միջավայրում, շրջապատված սիրով ու հոգատարությամբ: Երբ Միքայելին հիշեցնում են, թե «Կարծես ամբողջ կյանքումդ միայն այն ես երագել, որ գաս Ուրալ և Յասվայով նավակ ձգես բորիսովյիների համար» (Ա. Լուկիչ), Միքայելը պատասխանում է. «Իսկ բորիսովյիներն ինձ համար օտարնե՞ր են, ի՞նչ է՞: Վիպակում մի առանձին ջերմություն է նկարագրված բնությունը, մանավանդ անտառը, որը կարծես ջնչում է, ապրում, հուզում, հմայում մեզ իր պոետիկական վեհությամբ, սիրով համակում դեպի ողուսական չքնաղ բնությունը: Հաջողված է Անտոնինայի կերպարը, որի մեջ մարմնավորված են ողուս հայրենասեր կնոջ մի շարք լավագույն հատկանիշները՝ հոգեկան կայունությունը, աշխատանքային էնտուզիազմը, հարուստ հոգեբանությունը:

Հետպատերազմյան տարիներին զգալի հաջողությունների հասած բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը պաթոսով երգում է մեր մեծ երկիրը, որի սահմանները ձգվում են «Մինչև խաղաղական, մինչև Բալթիկա: Առանձնապես ուշագրավ են «Ջամբուլի հորեկյանը Ալմա-Աթայում», «Պելագեյա մայրիկ», «Ռայնիսի շիրմաքարը Ռիգայում», «Բժ հարազատները» և մի շարք ուրիշ բանաստեղծությունները: Կապուտիկյանը փառաբանում է ողուս մեծ ժողովրդի լեզուն, որը հաղորդակցության և մերձեցման անփոխարինելի միջոց է մեր բազմազգ ու բազմալեզու ժողովուրդների միջև:

Մենք հոծ, բազմալեզու, մեր երկիրն՝ անծայր
Թեև եղբայրության մենք նույն խոսքն ենք խոսում,
Բայց, եղբայրներ, մենք ո՞նց հասկանայինք իրար,
Ասենք, թե չլինեք ողուսաց լեզուն...

«Ռայնիսի շիրմաքարը Ռիգայում» բանաստեղծությամբ Ս. Կապուտիկյանը հմտորեն ցույց է տալիս, որ սովետական իրականությունը, կյանքը լի ու լի հագեցած է գեղեցիկ երևույթներով, շնչում է ժողովուրդների վսեմ եղբայրությամբ: Լատվիայում, լատիշ մեծ գրող Յան Ռայնիսի կողքին հանգչում է Հայրենական Մեծ պատերազմում քաջի մահով ընկած հայ զինվորը: Ի՞նչը կարող է ավելի խոստեն լինել ժողովուրդների եղբայրության մասին, քան այդ իրական փաստը: Նշելով այդ, Ս. Կապուտիկյանը, երկար խորհրդածությունների փոխարեն, սեղմ ձևով գրում է. դիմելով Լատվիային.

Բայց ինչ ասեմ արդյոք, ես ինչ խորհեմ կրկին,
 Որ առավել լինի խոսուեն ու զորավոր,
 Քան այն, որ հանգչում է քո Ռայնիսի կողքին
 Դիզայի մոտ ընկած մի հայ զինվոր...

Առհասարակ Ս. Կապուտիկյանն իր մի շարք բանաստեղծություններում լավ է վեր հանում մեր երկրի ժողովուրդների անխզելի միասնությունը, չմոռանալով նաև այն, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր տրագիգիաները, լեզուն, կուլտուրան: Տեղի ճագիլի լեռնագործների մոտ՝ ոտանավորում նա բարձրացնում է այն հարցը, որ հայ հյուրերը, հիանալով ուրալյան լեռնագործների ստեղծարար աշխատանքով, նրանց գեղեցիկ քաղաքով, միաժամանակ ցանկանում են ապրել ու աշխատել Յրևանում, ճիշտ այնպես, ինչպես ճագիլի բնակիչները, գովելով Երևանը, հայտնում են, որ կշարունակեն ապրել ու ստեղծագործել ճագիլում: Այս նշանակում է, որ տարբերություն չգնելով վայրերի միջև, սովետական մարդիկ սիրում են այն վայրը, որտեղ ծնվել են, ապրել, ստեղծագործել, սիրել ու ապրել, այն լեզուն, որով խոսում են: Սա սովետական հայրենասիրության արտահայտություն է, որի մեջ զուգակցվում են մեր ժողովուրդների ազգային տրագիգիաներն ու բազմազգ աշխատավորների կենսական շահերը: Չէ՞ որ այս է ցույց տվել դեռևս Վ. Մայակովսկին, երբ հուզված հրաժեշտ տալով Փարիզին և հմայված նրա «գեղեցկությամբ անասելի», գրել է.

Ես կուզեի
 ապրել
 ու մեռնել Փարիզում,
 Թե չլինեիր
 այն երկիրը,
 որ կոչվում է Մոսկվա:

Պարզ է, որ սխալվում է Գ. Էմինը, երբ Ս. Կապուտիկյանի այդ ոգով՝ գրված բանաստեղծությունների իդեան համարում է սխալ, որի դեմ ճիշտ կերպով բողոքում է քննադատ Ս. Աղաբաբյանը¹: Հենց ինքը՝ Գ. Էմինը հերքում է իրեն, գրելով «Մարի-յորեն» բանաստեղծությունը: Էմինն այստեղ ցույց է տալիս, թե ինչպես մի խումբ երիտասարդ մոլդավացիներ, ուրախ շրջելով Երևանում, կանաչազարդ Նորքը գիտում են որպես իրենց Կողբուն, մեր հերոսների արձանների մեջ տեսնում են իրենց ազգային հերոսներին, հպարտության զգացումով հիշում են Քիշինյովը, երգում են ոչ այլ ինչ, քան մոլդավական «Մարի-յորեն» երգը: Այս բոլորի մեջ խորը իմաստ կա, որը հաշվի չի առել քննադատ Էմինը, բայց գիտակցել ու դրացել է բանաստեղծը: Իմաստն այն է, որ սովետական օրենքների վեհությունը միայն կարելի է բացատրել այն իրողությունը, որ մոլդավացիները ազատորեն շրջում ու երգում են Երևանում իրենց «Մարի-յորեն», ճիշտ այնպես, ինչպես հայերը իրենց հարազատ կղզան Քիշինյովում և կերպեն իրենց «Քելե-Քելե»-ն: Հենց դրա համար են կովել, աշխատել, կրկին կովել ու աշխատել, տոկացել ու մաքառել սովետական մարդիկ, այդ են ձեռք բերել նրանք և այդ են ցանկանում աշխարհի բոլոր ժողովուրդներին համար:

¹ «Новый мир» 1953 г. № 4 և «Սովետական գրականություն և արվեստ», 1953, № 10:

Իր մի քանի ուրիշ բանաստեղծությունների մեջ Գ. Էմինը լավ է բացահայտում սովետական ժողովուրդների եղբայրությունը՝ ինքնուրույն արտահայտչական միջոցներով («Իմ գործը», «Մորս», «Հայաստան»), Հետաքրքրական հղացում է Գ. Էմինի «Դեպք Երբաղչինի նորակառույցում» սյուժետավոր բանաստեղծությունը, որտեղ, չնայած որոշ ձգձգվածության, ցուցադրված է ոուս և հայ ժողովուրդների հին ու նոր բարեկամությունը, Հին բարեկամության սիմվոլն է այն քարե արձանը (սերկու մարդ թիկունք-թիկունքի տված), որ գտնում են բանվորները նորակառույցի հիմքեր փորելիս։ Դա քանդակված է ոուս ազատագրական զորքերի հետ իրանական բռնակալների լծից հայ ժողովրդին փրկելու կովին մասնակցած հայ զինվորի ձեռքով՝

Որ սուրբ դաշինքը մեր եղբայրության
Միշտ ամուր մնա ու ապրի դարեր։

Ինչ վերաբերում է նոր բարեկամությանը, ապա դրա կենդանի մարմնադրումն են հենց նորակառույցի վրա եղբայրարար աշխատող վասիլն ու Օհանը։ Եթե Հր. Հովանյանը Պուշկինի և մի հայ ընտանիքի հանդիպման փաստի մեջ տեսնում է ոուս և հայ ժողովուրդների սրտառուչ բարեկամությունը անցյալում («Հանդիպում»), ապա Դ. Բորյանը «Քայլում էին երկու մանուկ ճամփաժիջում» բանաստեղծությամբ, ի դեմս ոուս և հայ մանուկների բարեկամության, ցույց է տալիս մեր օրերում ևս ոուս եղբայրական ժողովրդի անշահախնդիր օգնությունը հայ ժողովրդին։ Օրյոլից եկած ոուս անվանի վարպետը իր փորձն է հաղորդում Երևանի բանվորներին, օգնում նրանց հաև կոմունիզմի կառուցման գործում, իսկ նրա և իր հայ ընկերոջ մանուկները, բնականորեն, քայլում են «եղբայրության հավերժական ճանապարհով»։ Դ. Բորյանը ռուսական սիրով անկեղծ, երգում է ոուս մեծ ժողովրդին, փառաբանում Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը («Բաքու», «Սովետական Վրաստանին»), պատկերում ՍՍՌՄ ժողովուրդների համատեղ աշխատանքը և նոր հաղթանակները («Երգ ջրանցքի մասին»)։

Սովետական բազմազգ երկիրը դիտելով որպես ներշնչումների, սիրո, հույզերի և ապրումների անսպառ աղբյուր, իր ազնիվ սերը տալով կոմունիզմ կառուցող մարդկանց՝ անկախ նրանց ազգությունից և հարուստ ու հպարտ զգալով իրեն մեր ընդարձակ երկրում («Սիրո երգեր»), Մ. Մարգարյանը ջերմ տողեր է նվիրում ոուս մեծ ժողովրդին, երգում նրա առաջատար դերը մեր բոլոր նվաճումները ձեռք բերելու գործում («Ռուս ժողովրդին»)։

Ռուս մեծ ժողովրդի մասին շատ են գրել մեր բանաստեղծները, արձակագիրները, դրամատուրգները։ Դա ինքնին մի առանձին ուսումնասիրության նյութ է։ Նշենք միայն, որ այդ տեսակետից հետպատերազմյան գրականության մեջ հետաքրքրական է նաև Բ. Սեյրանյանի «Ռուսական սիրտ» պատմվածքը։ Այստեղ պատկերված է ոուս մարդու հոգեկան հարըստությունն ու գեղեցկությունը։ Հեղինակը կարողացել է թափանցել իր հերոսի՝ «Իրասնիյ մետալիստ» գործարանի անվանի վարպետ Լեոնիդ Սուլովյովի հոգու խորքերը, վերարտագրել սրտաքինից զուսպ, «պարզ, կատակասեր, աշխույժ» այդ բնավորության խորը զգացումներն ու խոհերը։

Լենինգրադից գալով Երևան, նա տեսնում է իր կորած երեխային՝ Պավկային որդեգրած Դովլաթյանների և Պավկայի սերտ կապերը։ Իմանալով, որ Արամ և Աննա Դովլաթյանները պատերազմում կորցրել են երկու որդիներին և նրանց մխիթարանքն է դարձել Պավկան, Լ. Սուլովյովը իր մեջ ուժ է գտնում չմթագնելու նրանց այդ երջանկությունը, թեև հայրական ամբողջ գործվանքով սիրում է իր զավակին։ Ճկարկի մեծ ու բարի սիրտ,— ինչպես հուզված ասում է Արամը,— ոուս մարդը կարող էր ունենալ։

Բ. Սեյրանյանը իսկույն չէ, որ լուծում է այդ բարդ հոգեբանական պրոբլեմը։ Նա գեղարվեստորեն, համոզիչ կերպով նախապատրաստում է իր հերոսի քայլը։ Սուլովյովը չի հրաժարվում իր զավակից, նա վերագառնում է պայմանով, որ Պավկան իմանա ճշմարտությունը և ինքը որոշի իր անելիքը։ Դիմելով Դովլաթյանին նա ասում է. «Ես ձեր ոուս եղբայրը այնտեղ՝ Լենինգրադում, գուցե իմ հայ եղբայրը՝ այստեղ, Երևանում»։ Հայ և ոուս ընտանիքների այդ հուզիչ բարեկամությունը ունի լայն հեռանկարներ, այս հավատով է հեռանում Լեոնիդ Սուլովյովը, այս հավատով են լցված Դովլաթյանները, այդ հավատով է համակվում նաև ընթերցողը։

Սովետական եղբայրական ժողովուրդների կյանքն ու աշխատանքը, նրանց մեծ բարեկամությունը երգելու ուղղությամբ մի առանձին ակտիվություն ենք նկատում Ս. Տարոնցու և Ա. Գրաշու հետպատերազմյան պոեզիայում։ Չի կարելի դրական երևույթ չհամարել, որ Ս. Տարոնցին մի կողմ թողնելով պատմությամբ միակողմանիորեն տարվելու իր հին տենդենցը, որը նրան հասցնում էր գաղափարական սխալների, վերջին տարիների ընթացքում երգում է Ստալինգրադը, Լատվիան, Վրաստանը, սովետական մեծ առօրյան (ստալինգրադ և Մեծ առօրյա գրքերը)։ Նա ունի բանաստեղծություններ, որոնք լավ են վեր հանում ոուս ժողովրդի դերը մեր ժողովուրդների կյանքում (ստալինյան ամիսը), հաջողությամբ ցուցադրում են ագրիկուլտուրայի ոգևորչ աշխատանքը Ստալինգրադում, ինչպես հարազատ քաղաքում (ստալինյան Ալի կղի), արտահայտում հեղինակի խիղճն ու հուզմունքը եղբայրական Լատվիայի ու Վրաստանի բարգավաճման առթիվ (ստալինյան և ժպիտ և այլն)։ Բայց, զժրախտաբար, Տարոնցու մոտ գերիշխում են թույլ, անհույս, զեկլարատիվ ոտանավորները, որոնցում տարբեր ռեսպուբլիկաները պատկերվում են գրեթե միևնույն գույներով, երբեմն նույն բառերով։ Այսպես, Վրաստանի մասին նա գրում է. «Ահա հագել ես դու մետաղ, թուջ ու երկաթ» (ստալինյան Վրաստանին), Լատվիան բնութագրելու համար ասում է. «Ահա Լատվիան՝ պողպատ, չուգուն և երկաթ» (ստալինյան երգիչը)։ Ինչ վերաբերում է Ա. Գրաշուն, ապա պետք է ընդգծել, որ թերևս սովետահայ գրողներից և ոչ մեկը հետպատերազմյան տարիներին այնքան չի դրել տարբեր երկրների ու ժողովուրդների մասին, որքան նա։ Եվ այնուհանդերձ Գրաշին իրեն պարտք է զգում սովետական եղբայրական ռեսպուբլիկաներին, որ չի կարողացել նրանց մասին ավելին խոսել (ստալինյան եղբայրության)։ Բայց Ա. Գրաշին, իրականում, պարտք է մնում ոչ թե այն պատճառով, որ քիչ է խոսում, այլ այն պատճառով, որ քիչ է գրում լավ, ապրված, էմոցիոնալ բանաստեղծություններ, ուղադրություն չի գարձնում լեզվական կուլտուրայի վրա, կուլտակում է միակերպ ու միապաղաղ գույներ, էպիտետ-

ներ, առանձին դեպքում միայն գրելով հաջողված բանաստեղծություններ (Ճանաչում եմ երկիրը այն, Ռուսաստանին, Վերելյան եղևիններ, Քմ մանկության քաղաքը և այլն)։

Քննադատությունն արդեն ցույց է տվել, որ հետպատերազմյան տարիներին սովետահայ մի շարք անվանի և երիտասարդ գրողների ստեղծագործությունները զերծ չեն տարբեր կարգի թերություններից։ Նշենք դրանցից Նոր-Այրի Վույսերը, Բ. Ստաֆֆու Վործությունը, Ղ. Կոմունու Վխուրյանը, Զ. Դարյանի Վննությունը, Ն. Զարյանի (Վրմենուհի), Գ. Սարյանի (Վրաշալի սերունդ), Վ. Գրիգորյանի (Վոեմ հողի մասին) պոեմները, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Հ. Թումանյանի, Վ. Արամունու, Վ. Կարենցի և ուրիշների առանձին բանաստեղծությունները։ Այս բոլոր գրվածքների մեջ էլ գործում են տարբեր ազգի մարդիկ, բոլորի մեջ էլ խոսվում է ժողովուրդների բարեկամության մասին։ Նոր-Այրի վեպում խոսք կա Ագրեջանի և Հայաստանի գործառանների մրցության և փոխադարձ օգնության մասին։ Ղ. Կոմունին պատկերում է քրդական և հայկական բրիգադաների համատեղ աշխատանքն ու բարեկամական մրցությունը։ Զ. Դարյանը ցույց է տալիս նոր տեխնիկայի յուրացման գործում մեր երկրի ժողովուրդների օգնությունը միմյանց։ Բայց նշած գործերը չեն բավարարում մեր ընթերցողների աճող պահանջները, չեն դիմանում քննության նաև մեզ հուզող հարցի տեսակետից։

Մեր ռեսպուբլիկայի կյանքին նվիրված երկերի թվում, ժողովուրդների բարեկամությունն անհամեմատ լավ է իր արտացոլումը գտել Սարմենի, Հ. Շիրազի, Աղափու պոեզիայում։

Վառավարական տան առաջ բանաստեղծության մեջ Սարմենը երգում է Սովետական Հայաստանի շքեղ կառույցներից մեկը, որը ճիշտ կերպով դիտվում է որպես հայ ժողովրդի բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրայի վառ նմուշ։ Եվ ահա բանաստեղծը երախտագիտության խորին զգացումով հաստատում է այն փաստը, որ այդ, նմանապես և մյուս նվաճումները, արդյունք են ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրության։

Մենք ազգերի եղբայրությամբ զրահված
Հովանու տակ աշխարհաչեն Միություն,
Մեր հորդարուխ հանճարի հուրը վառած՝
Հիմք դրեցինք նվիրական մեր այս տան։

Սարմենն իր Վյուլանն ու Լալանն բանաստեղծությամբ ցույց է տալիս, թե ինչպես Սևանի ափին եղբայրների պես զրուցում են հայն ու ադրբեյջանցին, իսկ նրանց բարեկամության ժանթառում ու պերճ ծաղկունքը հանգիսացող երեխաները ճաշում ու համերաշխ խաղում են, թովոում, թիթեռներ բռնում և ծաղիկ քաղում մեկը մյուսի համար։ Պոետը համոզվում է, որ մեր երեխաներն, իրոք, դաստիարակվում են անխզելի եղբայրական բարեկամության ոգով։

Արտահայտելով Շիրակավանի կոլտնտեսային դաշտերից ստացած իր տպավորությունները, բանաստեղծուհի Աղավին շեշտում է, որ հայ կոլտնտեսականը հպարտությամբ է մտածում, որ իր բերրի արտերը ձգվում-

հասնում են մինչև Ալթայ, ճիշտ այնպես, ինչպես Ալթայի հողերը սահմանակից են Արաքսին (Վերականգնում)։ Այսպիսով, բանաստեղծուհին յուրովի զարգացնում է այն միտքը, որ սովետական հողագործների գիտակցության ու հոգեբանության մեջ արմատավորվել է միասնական Հայրենիքի զգացումը, որը բարձր է ու ազնիվ, խորն ու փառապանծ՝ Վահագնի պատված, այսինքն՝ գոգնված ազնիվ աշխատանքով։ Վեհանայինք բանաստեղծության մեջ Աղավնին այդ բարեկամությունը դիտում է որպես երաշխիք այն բանի, որ Արաքսի այս ափին աճում է խաղաղության առատ բերքը, մինչդեռ սահմանից այն կողմ, ազգային գզվուտոցի բուրժուական պայմաններում, սարսափում են ազգերի իրավահավասարությունից ու եղբայրությունից, մասնավորապես յանկին գիտե և վախենում է, որ

Եղբայրությունը ճամփա կհարթի

Շիրականից մինչև Հնդկաստան։

Հ. Շիրազի հետպատերազմյան երկու հաջորդված պոեմներն ել (Վեհ ընկեր Լորիկը և Վեր գյուղերի անունները) տողորված են սիրո և երախտագիտության անկեղծ զգացումներով դեպի մեր երկրի եղբայրական ժողովուրդները՝ ոուս մեծ ժողովրդի գլխավորությամբ։ Իր ինքնատիպ մտահղացմամբ և գեղարվեստական ուժով առանձնապես աչքի է ընկնում Վեր գյուղերի անունները պոեմը, որտեղ բազմաթիվ պատմական տեղանունները նոր անուններով կոչելու փաստի մեջ, Հ. Շիրազը տեսնում և հույզով ու պաթոսով նկարագրում է ժողովուրդների եղբայրությամբ շրջապատված հայ աշխատավորության փայլուն հաղթանակները Սովետական Իշխանության տարիներին։ Եթե օտարերկրյա բռնակալները դարեր շարունակ ասպատակելով Հայաստանը միայն ստրկություն ու աղետներ են բերել, ապա ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում հայ ժողովուրդը կառուցել է նոր, լուսավոր, Վեհից մեկից շուրջ ու շենք գյուղեր, ապրում է, ազատ է ու երջանիկ, դարձել է հզոր և անպարտ։

Մեր փրկության լույսն է ծագել․

էլ չեն կարող ասպատակել,

Բերել մեզ վիշտ,

Քանզի բնդմիշտ

Մենք դարձել ենք մի սիրտ, մի բերդ

Խաղաղության հսկայի հետ։

* * *

Սովետահայ հետպատերազմյան գրականության մեջ մի նոր, թարմ հոսանք էին այն ստեղծագործությունները, որոնք նվիրված են Սփյուռքի հայերի հայրենադարձությանը։ Այդ երկերի գաղափարական հիմքում դրված է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, որը հնարավորություն տվեց աշխարհով մեկ սփռված հայերին վերադառնալու Հայրենիք, ազատագրվելու ազգային խտրականության կապիտալիստական լծից և դառնալու սովետական հասարակության իրավահավասար անդամներ, առաջին անգամ վայելելու ազգերի ու ժողովուրդների իսկական եղբայրության պտուղները։

Այդ թեմայով գրված բազմաթիվ ստեղծագործություններից կանգ առնենք երիտասարդ, շնորհալի բանաստեղծ, վաղամեծ Անդրանիկ Թերզյանի պոեզիայի վրա:

Դեռևս Հալեպում գրած իր բանաստեղծություններում Թերզյանը պատանեկան խանդավառությամբ ողջունում է Մոսկվան, որպես ճաշարհի ձայնին հարազատ քաղաք՝ (Մոսկվա), ակնածանքով ու սիրով է խոսում սովետական հերոս երիտասարդների մասին (Շուրա Չեկալին): Գալով Սովետական Հայաստան, բանաստեղծը մի առանձին խորությամբ է զգում մեր երկրի ժողովուրդների ուժն ու վեհությունը, այդ մասին գրում է մի շարք ոտանավորներ (Տանյա և այլն) և թեև անավարտ, բայց պաթոսով ի մի պոեմ՝ «Պաղատան խաչի տունը»:

Ա. Թերզյանն իր պոեմում վերհիշում է պանդուխտ հայության ծանր ու տառապալից ուղին, հազարավորների թվում նաև իր պոեմի կենտրոնական հերոսի մազապուրծ փախուստը թյուրքական ջարդարարների ստեղծած սպանդից, ողբերգական թափառումներն ու դժոխային կյանքը այլևայլ երկրներում՝ Եգիպտոսում և օտար երկրքի տակ: Ցավով ու ցասումով նա ցույց է տալիս, որ կապիտալի աշխարհում ոչ մի տեղ չկա ու չի կարող լինել ոչ ազատություն, ոչ իրավահավասարություն: Ըստ որում պոետը վերաբերվում է տեսած ու զգացած կյանքը, այնպես, որ նրա խոսքը չի կրում հայտարարությունների բնույթ, մանավանդ, որ պոեմի կենտրոնական հերոսի գերում մենք տեսնում ենք հեղինակի հորը:

Պոեմի երկրորդ և նշանակալից մասում հեղինակը պատկերում է հայրենադարձ հայերի բոլորովին նոր կյանքը Սովետական Հայաստանում: Այս մասում բանաստեղծական մոտայ գույներին փոխարինում են պայծառ գույները, ցասումն ու զայրույթը իրենց տեղը զիջում են բնական խանդադատանքին ու բերկրանքին: Իր երիտասարդական ամբողջ ավյուրով Թերզյանը փառաբանում է սոցիալիստական կյանքի վեհությունը, կոնկրետ փաստերի գեղարվեստական բացահայտմամբ ցույց տալիս, որ Երփիությունը հայությունը վերջապես ազատ շունչ է քաշում սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում: Վերադառնալով Հայրենիք, նախկին իրավազուրկ և հալածված աշխատավորները դառնում են հասարակության իրավահավասար անդամը և ստեղծագործական խանդավառությամբ լծվում Հայրենիքի բարգավաճման գործին: Նրանք կառուցում են իրենց սեփական, հարազատ տունը, որի մասին երազել են շարունակ: Նրանք իրենց սրտերը ձուլում են սովետական բազմազգ ժողովուրդների ճեղքայրության քուրայի մեջ: Անկրտրում հավատ տածելով դեպի ՍՍՌԽ ժողովուրդների եղբայրության անխորտակելի ուժը, Ա. Թերզյանն իր պոեմի վերջում գրում է.

Միշտ անկործան կմնա տունն այս հայրենի,
Կմնա Հայաստանն իմ բազմաբեղուն,
Եվ կմնա Հայրենիքն իմ լայնածավալ
Որպես մի տուն եղբայրության, խաղաղության:

Հայրենադարձությանը նվիրված բոլոր գործերն էլ շնչում են ատելությամբ դեպի կապիտալի մոտայ աշխարհը, իմպերիալիստական օրենքները, սոսոյական ատելության ստոր քաղաքականությունը և տողորված

են անհուն սիրով սովետական իրավակարգի նկատմամբ, որտեղ գործում է ազգերի ու ժողովուրդների իրավահավասարության ու եղբայրության կոմունիստական քաղաքականությունը, որի հովանու տակ բոլոր մեծ ու փոքր ազգերը, ժողովուրդները եղբայրների պես աշխատում և պայքարում են կոմունիզմի ու խաղաղության համար:

* * *

Խաղաղության թեման առանձնահատուկ տեղ է գրավում սովետահայ հետպատերազմյան գրականության մեջ: Հանդես գալով որպես խաղաղության համար ծավալված ժամանակակից շարժման առաջամարտիկներ, սովետական, այդ թվում և սովետահայ գրողները երգում ու փառաբանում են խաղաղության գրոշի տակ համախմբված հարյուր միլիոնավոր մարդկանց եղբայրական համերաշխությունը՝ անկախ նրանց ազգային կամ ռասայական պատկանելիությունից, կրոնական կամ քաղաքական հայացքներից, նոր ուժով բարձրացնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարը: Երգելով խաղաղությունը, մեր գրողները գեղարվեստական պատկերներով հաստատում են, որ եթե իմպերիալիզմի լազերում մոլեգնում է ռեակցիան, գնալով սրվում է կոնֆլիկտը տարբեր երկրների կապիտալիստների միջև հանուն գերագույն շահույթի, որը պայմանավորված է կապիտալիզմի տնտեսական հիմնական օրենքի բուն էությամբ, ապա՝ սոցիալիզմի լազերում, որտեղ գործում է սոցիալիզմի տնտեսական հիմնական օրենքը, տիրում է լիակատար համերաշխություն և եղբայրական համագործակցություն՝ «որի հիմքում գրված է մեկը մյուսին օգնելու և ընդհանուր տնտեսական վերելք ձեռք բերելու անկեղծ ցանկությունը»¹։ Մեր գրողներն իրենց ստեղծագործությամբ նշանակալից դեր են կատարում Սովետական Միության և Ժողովրդական Դեմոկրատիայի երկրների ժողովուրդների մեծ բարեկամության արտացոլման և դրա ամրապնդման գործում, այդ բարեկամությունը ճիշտ կերպով գիտելով որպես խաղաղության երաշխիք: Արձագանքելով խաղաղությանը, մեր գրողները պատկերում են կապիտալիստական մի շարք երկրների ժողովուրդների կյանքը, մերկացնում կապիտալիզմի երկրներում տիրող այլանդակ բարքերը, տյգ թվում և բուրժուական մոլի նացիոնալիզմը, ռասիզմի ստոր իդեոլոգիան, միաժամանակ ցույց տալով աշխատավոր լայն մասսաների ձգտումը և պայքարը հանուն խաղաղության, հանուն խաղաղ համակեցության և ինտերնացիոնալիզմի:

Խաղաղությանը նվիրված Ն. Ջարյանի պոեզիան սկզբից մինչև վերջ հագեցած է պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարով: Ն. Ջարյանի ձայնի ելեէջները վարպետորեն փոխվում են՝ նայած թե որ լազերի մասին է խոսքը՝ խաղաղության, թե պատերազմի: Ահա թե Ջարյանը ինչպես է խոսում Խաղաղության ծառայող աշխատավորների մասին.

Նիդերլանդի երեխաները, թաթիկները սև,
Բամբակ են հավաքում ճերմակ-ճերմակ,
Վերից նրանց հսկում է մի անդուլ արև,
Վարից՝ վերկացուն ծանրամտրակ:

¹ Բ. Վ. Սալիհ, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, 1952, էջ 34:

Սովետական մարդու համար նման շատ հարազատ ինտոնացիաներ կան «Խոսք աշխարհին» բանաստեղծության մեջ նաև Եգիպտոսի, Բրազիլիայի, Կորեայի, Չինաստանի և այլ երկրների մասին: Նույն բանաստեղծության մեջ Ջարյանի ձայնը հնչում է որպես շիկացած բողոք, երբ նա խոսում է իմպերիալիստական գիշատիչների մասին, որոնք ԱՄՆ-ում և այլուր գրգռում են ժողովուրդներին իրար դեմ, սերմանում թշնամանք և երկպառակություն, ստում, կեղծում, զրպարտում:

«Խաղաղության Աղավնի» ժողտրիկ բանաստեղծությամբ Ն. Ջարյանը նկարագրում է խաղաղության կոնգրեսը: Մի քանի բնորոշ ու դիպուկ շտրիխներ և հեղինակը լիակատար դադափար է տալիս կոնգրեսի խաղաղասիրական նպատակներին, տարբեր ազգի, գույնի, դավանանքի մարդկանց պարզ ու շիտակ բնավորության և անշահախնդիր ու անկեղծ բարեկամության մասին:

Դեղհատներ, կային այնտեղ
Մորթերը սև, սպիտակ,
Մաղերը կոշտ, աչքերը շեղ,
Բայց հոգիներ՝ շիտակ:

Այսպիսի տողերի մասին է ասված, թե պետք է գրել այնպես, որ միտքն ընդարձակ լինի, իսկ բառերը՝ քիչ:

Ն. Ջարյանը, Գ. Էմինը, Հ. Սահյանը և ուրիշները եղբայրական սրտագին խոսք են ասում չին մեծ ժողովրդին, փառաբանում նրա պատմական հաղթանակը և սերտ բարեկամությունը Սովետական Միության և աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների հետ: Գ. Էմինն իր «Կարմիր հրապարակում» բանաստեղծության մեջ վեր է հանում չին մեծ ժողովրդի նվիրական զգացումները դեպի խաղաղության և ժողովուրդների եղբայրության հանգրվանը հանդիսացող Մոսկվան, ուր չին ժողովրդի զգացումը խորապես հարգում են բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները: Հ. Սահյանը հուզական թափով ու հրճվածքով ցույց է տալիս, որ իրականություն է դարձել նրա երազանքը ազատ կյանքի մասին, հասել է «դարավոր գերության վախճանը» (սկզբին պորտրեն Պեկինում):

Սովետական բանաստեղծների համար հավասարապես հարազատ են սոցիալիզմի և դեմոկրատիայի ուղին բռնած բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները, որոնք թոթափելով կապիտալի լուծը, սերտորեն համախմբվել են խաղաղության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ դրոշի տակ: Բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը ցույց տալով, թե ինչպես հեռավոր Ալբանիա է հասնում փոքրիկ մանկական մի դրոշ վրան գրված «Մեկը մայիսի», շեշտում է, որ դա պրոլետարական ինտերնացիոնալիզմի, միջազգային համերաշխության լեզուն է, որը հասկանալի է բոլորին նաև Ալբանիայում, անկախ այն բանից, թե ինչ լեզվով են գրված այդ բառերը («Պատմվածք Մայիսմեկյան դրոշի մասին»): Աշոտ Գրաշին հարազատ եղբայր է համարում չեխական ականավոր ուղիղության և գրող Յ. Ֆուչիկին («Յուլիոս Ֆուչիկն իմ եղբայրն է»), Հ. Սահյանը գրում է հունգարական մեծ գրող Շանդոր Պետեֆի մասին («Գիտե՞իր, արդյոք...»): Սովետահայ գրողների համար հարազատ են խաղաղության մարտիկները ամբողջ աշխարհում, ինչպես նրանք, որոնք արդեն թոթափել են իմպերիալիզմի

լուծը, այնպես էլ նրանք, ովքեր իմպերիալիստական ռեակցիայի պայմաններում մաքառում են բռնություն ու խավարի դեմ, խիզախորեն հանդես գալիս ի պաշտպանություն խաղաղության ու ժողովուրդների եղբայրության՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Թյուրքիայում և այլ երկրներում: Սովետահայ գրականության արժանավայել հերոսներ են դարձել նեգր ականավոր երգիչ Պոլ Ռոբսոնը, թյուրքական մեծ բանաստեղծ Նազիմ Հիքմեթը, ֆրանսիական, իտալական, հունական և բազմաթիվ ուրիշ ժողովուրդների հայտնի ու անհայտ ողբիներն ու դուստրերը: Բանաստեղծուհի Հո. Պոդոսյանի համար հարազատ քույր է հնդիկ մեծ ժողովրդի խիզախ դուստրը, որը դժվարին պայմաններում ստորագրություն է հավաքում խաղաղության համար («Բալլադ հնդկուհու մասին»): Մ. Մարգարյանը մայրական գործվանքով դիմում է հնդիկ, արաբ, պարսիկ, նեգր մանուկներին, նրանց անվսնում թիմ անմեղ, ազնիվ, արդար խելոքներ, հորդորում, որ չնայած ծանր պայմաններին՝ չլավ օրեր կգան բոլորիդ համար» («Բմն եք բոլորդ»):

Առհասարակ հետպատերազմյան ժամանակաշրջանում նշանակալից են այն երկերը, որոնք պատկերում են զանազան երկրների ժողովուրդների կյանքն ու կենցաղը, աշխատանքն ու պայքարը: Եվ դա հասկանալի է, քանի որ սովետական մարդկանց խորապես հուզում է բոլոր երկրների աշխատավորների բախտը, նրանց պայքարը հանուն խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի:

Սովետական գրողներ Կ. Սիմոնովի, Ն. Տիխոնովի, Օ. Մալցևի, Մ. Տուրսուև-Ջադեի, Մ. Իրրահիմովի և մյուսների գործերի թվում, այդ տեսակետից, ուշագրավ է Դ. Սևոնցի «Թեհրան» վեպը, ուր հեղինակը նկարագրում է հարևան իրանական ժողովրդի կյանքը: Սևոնցի վեպը հագեցած է համակրանքի խորը զգացմունքով դեպի Իրանի աշխատավորությունը: Արձակագիրը ցավով ու ավստոսանքով է նկարագրում աշխատավոր մարդկանց ծանր ու տառապալից կյանքը՝ ներքին կեղեքիչների և օտարերկրյա իմպերիալիստների ազդակործան լծի տակ: Գրողը ռեալիստական համոզիչ ձևով վեր է հանում այն իրողությունը, որ երկրի իշխող խավերը՝ կապված ամերիկյան, անգլիական, գերմանական իմպերիալիստների հետ, նրանց հետ միասին պատռո են խլում միմյանց կոկորդից, ամեն տեսակ ստոր դավերի են դիմում՝ հանուն գերագույն շահույթի: Ռեալիստական, անհատականացված և տիպական մի շարք կերպարների (Նամվաթ, Խոսրով Խավար, Ղորանի, Վսուդի, Մեեր, Բենտոն և այլն) կոնկրետ գործերի պատկերմամբ, Գ. Սևոնցը մերկացնում է ժողովրդի արյունախումբ թշնամիների իսկական դեմքը, նրանց ստոր քաղաքականությունը, որը ուղղված է աշխատավորության մեջ երկպառակություն, ազգային թշնամանք սերմանելու գործին, Իրանի ժողովրդին Սովետական Միության դեմ գրգռելու և խավարի ու ստրկության մեջ պահելու գործին: Արձակագիրը, մյուս կողմից, վերարտադրելով իրականության ճշմարտությունը, մի առանձին ջերմությունամբ է պատկերում Իրանի ժողովրդի լավազույն զավակների ունեցուցիուն պայքարը ռեակցիայի ու բռնության դեմ, ցույց է տալիս տարեր ազգություն ու խավերի մարդկանց համերաշխ, եղբայրական միասնու-

¹ „Иправда“, 1952, № 75.

թյունը՝ ազատության համար մղվող պայքարում (Շամս Ազադի, Շուքրաթ, Տիգրան և ուրիշներ)։ Մեզ ծանոթացնելով իրանական կյանքի մի քանի էական կողմերին, Գ. Սևունցը խորապես համոզում է, որ Իրանի ժողովուրդը սիրով է լցված դեպի ՍՍՌՄ ժողովուրդները, որոնց նա իրավամբ համարում է իր անշահախնդիր բարեկամը։ Կարդալով «Թեհրանը» համոզվում ես, որ Իրանի աշխատավորությունը վառ կպահի Թեհրանում և երկրի մյուս մասերում բռնկված ուղյուղյալի «շողշողուն կրակները», որ բորբոքել են պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ համախմբված մտավոր ու ֆիզիկական աշխատանքի մարդիկ։

Արտասահմանյան տարրեր երկրների ժողովուրդների կյանքն ու պայքարը պատկերող Արաքսի, Բ. Սեյրանյանի, Հ. Ղուկասյանի, Ար. Ավագյանի, Գր. Քեշիշյանի և մյուսների վեպերը, պատմվածքները, նովելները, իրենց մասնակի և լուրջ թերություններն ունեն, բայց բոլորն էլ շնչում են այրող ատելությամբ դեպի բուրժուական աշխարհի ստոր ու այլանդակ օրենքները, այդ թվում և դեպի ուսսիզմն ու ազգային խտրականությունը։ Նրանք ուղղված են ազգերի ու ժողովուրդների իսկական բարեկամության ամրապնդման գործին։

* * *

Ամփոփենք։ Մեր հիմնական նպատակն էր ցույց տալ, որ ժողովուրդների բարեկամությունն իր արտահայտման տարրեր ձևերով ու երանգներով, որպես առաջատար գաղափար, իր արտացոլումն է գտել հետպատերազմյան սովետահայ գրականության մեջ, ըստ որում գրական տարրեր ժանրերի գծով ստեղծված և տարբեր թեմաներ ունեցող երկերում։ Պետք է ասել, որ մենք չընդգրկեցինք այն բոլոր ստեղծագործությունները, որոնց մեջ դրսևորված է ժողովուրդների բարեկամությունը, ինչպես, օրինակ, այն բազմաթիվ ակնարկները, որոնք պատկերում են ՍՍՌՄ ժողովուրդների համատեղ աշխատանքն ու եղբայրական փոխօգնությունը, շատ բանաստեղծություններ՝ նվիրված տարբեր ժողովուրդների ու տարբեր ազգի մարդկանց, չխոսեցինք սովետահայ գրողների մի շարք հոգվածների, ելույթների, կատարած թարգմանությունների, գրական կապերի մասին, որոնք նմանապես ուղղված են բարեկամության ամրապնդման գործին։ Մենք հանգամանորեն չխոսեցինք նաև քննության առած բոլոր ստեղծագործությունների մասին։ Սակայն, թվում է, պարզ դարձավ, որ հետպատերազմյան տարիներին ստեղծվել են մի շարք արժեքավոր գործեր՝ նվիրված ժողովուրդների բարեկամությանը։ Միանգամայն ճիշտ համարելով սովետահայ պոեզիայի հարցերին նվիրված վերջին դիսկուսիայում արտահայտված այն միտքը, որ մեր գրողները երբեմն տարվում են, այսպես կոչված, «գրոհայնություններ»՝ նաև ժողովուրդների բարեկամության արտացոլման գործում, որը և տեղիք է տալիս լուրջ թերությունների, չենք կարող չնշել, որ հետպատերազմյան տարիներին մեծապես ընդարձակվել է սովետահայ գրողների ստեղծագործական տեսագաղտը, ընդլայնվել է նրանց երկերի թեմատիկան, ղգալիսրեն ակտիվացել է նրանց վերաբերմունքը միութենական ու միջազգային երևույթների նկատմամբ։

Գնալով խորանում, ամրանում, զարգանում է ՍՍՌՄ ժողովուրդների մեծ եղբայրությունը, ընդլայնվում ու կոփվում է եղբայրական բարե-

կամությունը Սովետական Միության և Ժողովրդա-դեմոկրատական երկրների Ժողովուրդների և խաղաղասեր մարդկության միջև, որոնք միացյալ ուժերով անդուլ պայքարում են խաղաղության համար, ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի ու ռասիզմի քաղաքականության։ Սովետահայ գրողների սրբազան պարտականությունն ու առաջնակարգ խնդիրն է այսուհետև ևս նոր ուժով բարձրացնել Ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարը, ամենայն սրությամբ պայքարել նացիոնալիզմի, ազգային խտրականության ամեն տիպի արտահայտությունների դեմ, սովետական մարդկանց դաստիարակել եղբայրության ոգով, իրենց գեղարվեստական խոսքով ամեն կերպ ամրապնդել ՍՍՄԽ Ժողովուրդների մեծ, եղբայրական բարեկամությունը՝ մեր սոցիալիստական բազմազգ պետության անհաղթահարելի ուժի և հզորության այդ անսպառ ու հորդարուխ աղբյուրը։